









A. Roupen

progr. 1848




ՀԱՆՐԱՆՈՑ Թ. ԱՋԱՏԵԱՆ Ի ԹԻՎ.....





6126

Հ Ա Թ ՝ Ո Պ Ր Ի Ը Ն



Ռ Ն Ն Ը Գ Ռ Ս

03490935

8511

00-011-01-01

# ՌԵՆԵՍԱՆՍ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Ա Ց

ՏԻԳՐԸՆ Հ. Թ. ՍԵՎԵՐԻ  
ՆԵՐՆՑ

Յ ԸՆԿԵՐՈՒ Թ ԵՆԷ  
ՀԵՅԿԸ.ՔՆԵՐՆ



Ի ՋՄԻՒՌՆԻՆ

Ի ԳՈՐԾԸ. Ս. ՄԵՍՐՈՊԸՑ.

1844 ՌՄԳԳ


6126/14

UNIVERSITY

LIBRARY

OF THE

STATE



1871

1871

# ՌԵՆՆԵՐՈՍ .

Ռեննադոս Նաչէթներուն քովը հասնելով, ստիպուեր էր աղջկան մը հետ կարգուելու, հնդկաստանցոց սովորութիւններէն դուրս չելլելու համար, բայց կնկանը հետ մէկտեղ չէր ապրեր: Բնական տրտմութեամբ մը անտաններուն խորունկը կերթար կրքաշուէր, ուրտեղ բոլոր օրը կանցընէր, վայրենի մը թուելով նաև վայրենիներուն մէջ: Շարդաս իր հայրագիրէն (պասպալըք) ու հայր Սուէլէն ՚ի զատ, որ Ռոզալիայի 1 քարոզիչ էր, ուրիշ մարդու մը հետ ամենեին չէր տեսնուեր: Ընկերու ծերերը մեծ ազդուութիւն մը տուեր էին իր սրտին. առջինը՝ բարեկամական ներողամտութեամբը, մէկալը՝ անոր հակառակ իր խիստ մեծ անաչառութիւնը: Կուզի (քունտուզ) որսորդութենէն ետքը, որու մէջ կոյր Սաչէմը իր զլխուն եկածները Ռեննադոսին պատմեր էր, Ռեննադոս ամենեին չէր ուզեր իրենքիններուն համար ա-

նոր խօսք բանալ : Ու Հաքդաս քարոզիչին (միսսիօնար) հետ մէկտեղ շատ կը ջանկային զիտնալ թէ որ դժբաղդութիւնը արդեօք պատճառ եղած էր ասանկ մէկ քարեծնունդ եւրոպացիի մը միտքը փոխելու, որ յանձնառու եղեր էր Վրիզիանայի անասպատներուն մէջ դալ ու թաղուիլ մընալ : Ռենազոս չուզելով պատմել պատճառ կը բռնէր թէ իր պատմութեանը մէջ այնքան սորվելու ու օգուտ քաղելու բան մը չկար : “Բայց ի՞նչ դիպուած էր ան, “կրկրկնէր ետքը, որ իմ միտքս ըրաւ Վ. “մերիկա գալու : Ո՛հ, պէտք է որ յա. “ւիտենական մոռացութեան տակը ծած. “կեմ գան” :

Ասանկ քանի մը տարի անցաւ, ու երկու ծերունիները չկրցին անոր սրտին դազանիքները յայտնել տալու : Ռենազոս Աւրոպայէն նամակ մը առնելով, անանկ աւելցաւ իր տրտմութիւնը որ ինչուան իր ծեր բարեկամներուն երեսն ալ չէր ուզեր տեսնել : Ասոր համար աւելի վրան ինկան անոր ու քաղցրութեամբ ստիպեցին բանալ անոնց իր սիրտը, որ ալ ճարը հատնելով վերջապէս հաճեցաւ անոնց կամքը կատարել : Ուստի օր որոշեց՝ չէ՛ թէ իր կենս. հպուածները պատմելու, որ բնաւ հան.

դիպած չէր , այլ իր հողույն գաղանի  
 շղայողութիւնները յայտնելու :

Ան ամսոյն 21 ին՝ որ վայրենիները ծա-  
 ղիկներու լուսին կրսեն , Ռենադոս Շաք-  
 դասին խրճիթը գնաց ու ձեռքը ծեր Սա-  
 շէմին տալով՝ Մէսքաչէպէի եզերքը ծառի  
 մը շուքին տակը տարաւ . ուրտեղ հայր  
 Սուէն ալ շուտով եկաւ հասաւ : Ար-  
 շալոյսը կը ծագէրկոր , ու անոր ճառագայթ-  
 ներուն լուսովը Վաչէթներուն գեղը կը  
 տեսնուէր յասմիկի (եասէմի) անտառնե-  
 թովը մէկտեղ , ու իր խրճիթները (գօլիվա)  
 մեղուի բեթակներու (առը գօլանը) կընը-  
 մանէին . Գաղղիացի դաղթական ժողո-  
 վուրդները գետին աջ կողմը կը տեսնուէ-  
 ին : Վրանները (չատրը) , կէս շինուած  
 տները , նոր սկսուած ամրոցները , մշա-  
 կուած ու սև մարդիկներով լեցուն արտե-  
 թը , ճերմակ մարդկանց ու հնգկաստան-  
 ցոց գունդերը հոս հոն ցրուած կերե-  
 նային . ու աս սլզտի տեղույս մէջ ընկե-  
 րական ու բարբարոսական մէկմէկու հակա-  
 ոակ սովորութիւնները կը տեսնուէր : Արևե-  
 լեան կողմի տեսարանին խորունկը՝ արևը  
 կը սկսէր ծագիլ լեռներուն գլխէն , որոնք  
 երկնքի ոսկեգոյն տարածութեանը մէջ ան-  
 կապուտ գիրերու նման գծապէս

կրթութիւն . դէպ ՚ի արեւմտեան կողմը  
Մէսքաչէպէ գետը փառաւոր լռութեամբ  
մը իր ալիքները վազցընելով , աս սպտկե-  
րին շրջանակը կը ձեւացընէր անխմանալի  
մեծութեամբ :

Արիտասարդը ու քարոզիչը քիչ մը ա-  
տեն կանգ առին աս աղուոր տեսարանը  
նայելու , ու ցաւակից կը լային Մաշէմին  
որ ալ չէր կրնար անոր գեղեցկութիւնը  
տեսութեամբ վայելել . ետքը հայր Սուէ-  
լը ու Շարդաս նստան խոտին վրայ ծա-  
ռին ասկովը , ու Ռենադոս անոնց մէջ  
տեղը նստելով , և ըսպէի մը շափ ատեն  
լուռ կենալէն ու միտքը վրան ժողովէն  
ետքը՝ ասանկ սկսաւ խօսիլ իր ծեր բա-  
րեկամներուն .

“ Իմ պատմութիւնս սկսած ժամանակս  
չեմ կրնար բռնել իս ամօթխածութեան  
զգացողութենէ մը : Չեր սրտին հան-  
դարտութիւնը , ով յարգելի ծերունիներ ,  
ու բնութեան խաղաղութիւնը որ մեր չորս  
դին կը սլատէ , ամչցընել կուտան իս իմ  
հոգւոյս խռովութեանը վրայ : Ո՛հ , ի՛նչ  
պէս ձեր գութը պիտի շարժեմ , ի՛նչպէս  
թշուառ պիտի երևնան ձեզ իմ յաւիտե-  
նական վիշտերս : Դուք որ աշխարհքիս  
թշուառութիւնները փորձեցիք , ի՛նչ



սիտի ըսէք անդօր ու առաքինութիւն չու-  
նեցող երիտասարդի մը համար , որ ինքն  
իր սրտին մէջ կրկրէ իր տանջանքը ու ա-  
մենեին չկրնար գանգաւիլ ան շարիքնե-  
րէն՝ որոնց ինքն է պատճառ : Այն ինձի ,  
դատապարտելու մի ցանկաք զանիկայ , որ  
արդէն իր պատիժը դտած է” :

“ Իմ ծնունդս՝ մօրս մահուանը պատ-  
ճառ եղաւ , որու արդանդէն երկաթով  
հարկ եղաւ իս դուրս հանել : Այս եղբայր  
մը ունէի , որ իր անդրանկութեանը հա-  
մար՝ հօրս խիստ սիրականն էր : Քայց ես՝  
պզտիկութենէս ՚ի վեր օտար մարդկանց  
ձեռքը խնկելով , իմ հօրս տնէն դուրս  
տեղուանք սնայ ու մեծցայ” :

“ Բնութիւնս կրակոտ էր , ու անանկ  
բարք մը ունէի , որուն հաւասարը չկար ,  
երբեմն ուրախ կըլլայի ու բնաւ բերանս  
չէի դոցեր , երբեմն ախօւր ու լուռ կրկե-  
նայի . երբեմն իմ պզտիկ բնկերներս դը-  
լուխս կըծողվէի , ու երբեմն ալ ամէնքը  
մէկէն թող տալով , կերթայի առանձին  
տեղ մը կընստէի փախչող ամալը տեսնե-  
լու , կամ տերեւներուն տակը վազած անձ-  
րեր մտիկ ընելու” :

“ Աշնան եղանակը գալուն պէս հօրս  
տունը կըդառնայի , որ *Շաբաթն մէջ*

տեղը շինուած էր, լճի (կէօլ) մը մօտ, խիստ հեռաւոր դաւառներուն մէկուն մէջ:

“ Զօրս առջևը վախէս խելօք կրնաստէի, միայն Ամելիա քրոջս քովը աշխուժութիւնս կըսորբորէր ու համարձակ սրտիս ուզածը կրնէի: Քաղցր հակամիտութեամբ ու սիրով կապուած էի աս քրոջս հետ, որ ինձմէ քիչ մը մեծկակ էր: Արկուքնիս մէկտեղ բլուրներուն (սլայրը) վրայ ճանկելով կելէինք, լճին վրայ սղտիկ նաւակ մը հեծած թիալարելով ժուլուզայինք. տերեւները թափած ժամանա, կը անտառներէն կանցնէինք. զուարճալի դոստանքներ, ասոնց յիշատակովը միայն հիմայ հողիս անուշութեամբ կըլեցուի: Ո՛վ պատրանք տղայական հասակի ու հայրենեաց, ձեր քաղցրութիւնները միշտ գէտ 'ի իրենց զիս կըքաշեն”:

“ Արբեմն լուծեամբ կերթայինք երկուքնիս ալ աշնան խուլ ձայնին ականջնիս տալով, կամ շորցած տերեւներուն ձայնին, որոնք մեր ոտքին տակը տխրութեամբ մը կըխշտային, երբեմն անմեղ խաղեր խաղալու ժամանակնիս, ծիծեռնիկներուն ետեէն կերթայինք մարգագետիններուն (չիւմէն) մէջ, կամ ծիածանին ետեէն՝ անձրեէն յըջուած բլուրներուն վրայ, եր-

բեմն ուսանաւորներ կրփսրտայինք , ինչօր  
 որ աշխարհքիս տեսարանը մեզ կըսորվե  
 ղրնէր : Արիտասարգութենէս սկսեր էի  
 բանաստեղծութեան հետեւելու , ու իմ  
 աշխոյժ կիրքերուս մէջ՝ չկար ուրիշ աւելի  
 բանաստեղծական բան մը , տասնըվեց տա-  
 րեկան երիտասարդի մը մատաղաշ սրտէն  
 ՚ի դատ . ցորեկուան առաւօտուն պէս՝ մար-  
 դուս կենացը առաւօտն ալ անբծութեամբ ,  
 երեակայական պատկերներով ու սիրով  
 լեցուն է” :

“ Աիրակի ու միւս տօն օրերը շատ ան-  
 դամ լսեցի անտառին ծառերուն մէջէն  
 հեռաւոր կոչնակին ձայնը , որ կրօնաւորը  
 առձարը կըհրաւերէր զմարդիկ : Գառի  
 մը բունին կըթընելով լութեամբ մտիկ  
 կրնէի կոչնակին օրհնեալ ձայնը : Ամէն  
 մէկ զարնելուն՝ իմ ազատ հոգւոյս մէջ  
 կըծնէր վայրենի սովորութեանց անմեղու-  
 թիւնը , անասպառի հանգարտութիւնը , կը-  
 րօնքին դէպ ՚ի իրեն ձգող հրապուրիչ  
 զօրութիւնը , ու առջի տղայութեան հա-  
 սակի յիշողութիւններուն զուարճալի տրտ-  
 մութիւնը : Այս , որ մարդն է ան որ իր  
 ծնած երկրին կոչնակներուն ձայնը լսելուն  
 տիրաը չելէր , ան կոչնակներուն՝ որ ինքը  
 օրոյքին մէջ պատկած ատենը , ուրախու-

Նձեան ձայնը հնչեցուցին իր ականջներուն , որ իր աշխարհք դալը խմացուցին , որ իր սրտին առջի բարախումը (իւրեք չարփամար) ցուցուցին , որ բոլոր շրջակայ տեղուանքը իր հօրը սուրբ ուրախութիւնը ձանձրնեցին , ու իր մօրը ցաւերը ու անպատմելի խնդութիւնը հոշակեցին : Իր երկրին զանգակին ձայնը ի՞նչ ըսես որ անոր զուարճալի մտքին մէջ չձգէ , կրօնքը , հայրենիքը , ընտանիքը , օրոցքը ու գերեզմանը , անցածը ու գալիքը” :

“ Իրաւ է որ Ամելիա ու ես ուրիշներէն աւելի կրվայելէինք աս մտացածին խորհուրդները , միայն թէ երկուքնիս ալ սրտերնուս մէջ քիչ մը տրամութիւն ունէինք , որն որ Աստուծմէ ու մեր սիրական մօրմէն կը ծագէր” :

“ Անգամ մը դժբաղդարար ծանր հիւանդութեամբ մը հայրս պառկեցաւ , անանկ որ քիչ օրուան մէջ գերեզման իջեցուց զինքը : Անիկայ իմ բազուկներուս մէջ իր հոգին Աստուծոյ աւանդեց , ու մահը՝ որ բնաւ տեսած չունէի , անոր պոկունքներուն վրայ ճանչըցայ , որ ինձի կեանք տուեր էր , ու անանկ խորունկ մը ազգեց իմ ներսս՝ որ ինչուան հիմայ դեռ չանցնիր իր ազգեցութիւնը : Առջի անգա-

մը եղաւ ան՝ որ հոգւոյն անմահութիւնը  
յայտնապէս իմ աչուրներուս առջևը ե-  
կաւ . չէի հաւատար թէ ինչպէս ան հո-  
ղի չունեցող մարմինը պատճառ կըլլար  
իմ մտածութիւններուս . կըզգայի որ  
ասիկայ մէկ ուրիշ պատճառէ մը կուգար  
ինծի , ու անանկ սուրբ ցաւի մը մէջ՝ որ  
ուրախութեան կըլիօխուէր , յոյս ունեցայ  
որ օր մը ես ալ պիտի երթամ իմ ծնող-  
քիս հոգւոյն հետ միաւորուելու” :

“Աս միայն չէ , այլ ուրիշ դիպուածով  
մըն ալ իմ խորհուրդներս հաստատուե-  
ցան . իմ հայրս դադարէն մէջ դրած ժա-  
մանակներն , չեմ դիտեր ինչպէս , մէկ գե-  
րագոյն կերպարանք ունեցաւ : Ա՛նչու հա-  
մար ասանկ մէկ հրաշալի խորհրդաւորու-  
թիւն մը մեր անմահութեանը նշան պիտի  
չըլլար : Ի՛նչու համար մահը , որ ամէն  
բան դիտէ , իր ըրած զոհին ճակտին վրայ  
չպիտի տպաւորէ ուրիշ կեանքի մը գաղտ-  
նիքները : Ա՛ երջապէս ինչու համար գե-  
րեզմանին մէջ յաւիտենականութեան մէկ  
նշանը չպիտի գտնուի” :

“Ա՛մելիա չկրնալով զսպել իր սրտին  
ցաւը , աշտարակի մը խորունկը քաշուեր  
Ղապեր էր , ուսկէց՝ կըլսուէր զոթացուց  
շէնքին կամարներուն տակը՝ քահանանե .

տրամալի երգերուն ու սգալի կոչնա-  
 ձայները՝ մէկմէկու խառնուած : Աւ-  
 եցի որ իմ հօրս ընկերութիւն ընեմ ին-  
 չուան իր վերջին բնակարանը . երկիրը  
 գոցուեցաւ անոր մարմնոյն վրայ . յաւիտե-  
 նականութիւնը ու մոռացութիւնը կոխեցին  
 անոր վրայ իրենց ծանրութեամբը . նոյն  
 իրիկունը որ չանցած ան մարդուն դերեզ-  
 մանին վրայէն անխափր կանցնէին . ու բաց  
 ՚ի իր տղուն ու աղջկանը համար , անանկ  
 եղեր էր ան՝ որ ղիտես թէ ամենեին ա-  
 նանկ մարդ ծնած չէր” :

“ Ահտք եղաւ որ հայրենական տունս  
 թողում , որն որ իմ եղբօրս եղած էր ,  
 աւտի քաշուեցանք Ամելիայի հետ մէկ-  
 աեղ ու ծեր ազգականներնուս տունը  
 դացինք :

“ Աս աշխարհքիս խաբերայ ճամբանե-  
 ռուն բերանը կեցած՝ սկսայ մտածել ա-  
 նոնց վրայ մէկմէկէ ետե , առանց համար-  
 ձակելու ոտք կոխել անոնց մէջ : Ամելիա  
 շատ անգամ կըխօսէր ինձի կուսական կե-  
 նաց երջանկութեանը վրայօք , ու կըսէր  
 թէ՛ դուն ես միայն որ ինձի արդելք կըլ-  
 լաս կուսութեան նուիրելու իմ անձս , ա-  
 սանկ ըսելով՝ իր աչուրները տրամութեամբ  
 մը իմ վրաս կըտնկէր անատենր : Աս իօ-

ապրիլի 17-ին 1915 թ. Մեծապետ ազգային ին-  
 ծի, մտամուտով կերթայի վանքի մը մէջ  
 կը պատուէի, որ իմ նոր բնակարանէս հե-  
 առու չէր : Ասե ժամանակ եղաւ որ իմ  
 կեանքս յաւիտեան հոն ծածկել ուղեցի.  
 Երանի անոնց որ իրենց ճամբորդութիւնը  
 կատարեցին առանց նաւահանգստէն դուրս  
 ելլելու, ու ինձի պէս՝ անօդուտ օրեր չան-  
 ցուցին աշխարհքիս մէջ” :

“Աւերոպացիները անդադար խռովութեան  
 մէջ ըլլալով, ստիպուեցան անապատներուն  
 մէջ բնակիլ : Արքան որ մարդուս սիրտը  
 խռովուած ու անհանդիստ ըլլայ, այնքան  
 անապատներուն խաղաղութիւնն ու լուռ  
 թիւնը կը սիրէ : Իմ երկրիս ալ հիւրա-  
 նոցները՝ (միսաֆիրխանէ) որ միշտ բաց են  
 աղքատ ու թշուառ մարդկանց, հասարակո-  
 րէն հեռու ձորերու (տէրէ) մէջ շինած են,  
 որոնք մարդուս միտքը կը ձգեն իր քաշած  
 գծաղ գութիւններուն գեղեցիկ զգացողու-  
 թիւնը ու ապաստանարանի մը յոյսը. եր-  
 բեմն ալ բարձր տեղուանքներու վրայ  
 շինուած կը տեսնուին անոնք, ուրտեղ  
 աստուածապաշտ մարդուն ողին լեռներուն  
 քաղցրահամ բոյսին պէս՝ կերենայ թէ  
 գէպ ՚ի երկինք կելլէ իր անուշահոտ խուն-  
 կերը Աստուծոյ նուիրելու” :

ԲԱՆԳԱՐԱՆԻ

“Կարծեմ թէ ան Հին վանքին վաղուհ  
 ջրերը ու անտառները կրտեսենեմ , որո՞ք  
 մէկմէկու հետ աղուոր տեսք մը ունէին .  
 ուրտեղ քիչ մնաց որ իմ կեանքս այլան .  
 դակ բաղդին ձեռքէն պիտի ազատէի :  
 Կակ կարծեմ թէ արեւը մարը մտած մա-  
 մանակը , արձագանգ հանող ու անապատ  
 զարձած վանքերուն մէջ թափառական մուտ  
 կուգամ . ան ատենը որ լուսինը կամար-  
 ներուն սիւները (ախրէք) կէսէն կըլուսաւո-  
 րէր , ու անոնց շուքը զիմացի պատերուն  
 վրայ կրտեսնուէր , ես մահուան դաշտին  
 (գերեզմաննոց) մէջ կայնեցուցած խաչին  
 աչքս անկած կընայէի ու ան խոտերուն՝ որ  
 գերեզմանի քարերուն մէջ տեղուանքէն կը-  
 բուսնէին : Ա՛վ մարդիկ , որ աշխարհքէն  
 դուրս հեռու տեղուանք ապրիցաք , կենաց  
 լուսթեկէն մահուան լուսթիւնը փոխուե-  
 ցաք , ինչ տրտմալի փիլիսոփայութեամբ  
 մը չէր լեցուեր իմ սիրաս ձեր գերեզման-  
 ները տեսնելով” :

“Չեմ գիտեր թէ բնութեամբ փոփո-  
 խամիտ ըլլալէս էր , թէ կրօնաւորական կե-  
 նաց վրայ նախապաշարմունքէ մը , միտքս  
 փոխեցի ետքը ճամբորդութիւն ընելու .  
 Անաս բարով ըսի իմ քրոջս , որ իր թեկե-  
 տուն մէջ սխմեց իս անանկ մէկ շարժմունքով



որ ուրախութեան շատ կրնամանէր, որպէս  
 թէ իՏ երթալու համար խիստ գոհ ըլ-  
 լայ կըքուցընէր զինքը, ասոր վրայ սիրտս  
 ելաւ ու սկսայ մտածել թէ որքան ան-  
 հաստատ է եղեր մարդու սէրը” :

“Սիրտս միշտ եռանդով մը լեցուն ըլ-  
 լայով, նետուեցայ աշխարհքիս այնկոճեալ  
 ովկիանոսին մէջ միսմինակ, որուն ոչ ժայ-  
 սերը (գայա) կըճանչնայի և ոչ նաւահան-  
 դիսաները : Ընչի անգամը տեսութիւն  
 ըրի ան ժողովուրդներուն հետ, որոնք հի-  
 մայ մեռած են, ու ետքը գայի բնակելու  
 Էջնաստանի ու Հոռմայու մնացորդ աւե-  
 րակներուն վրայ, որոնց մէջ ժամանակ մը  
 քաջ ու հանճարեղ մարդիկներ ծաղկեցան,  
 ուրտեղ հիմայ պալատները հողին տակը  
 թաղուած են, ու թագաւորներուն հոյա-  
 կապ գերեզմանները աղբերուն տակը ծած-  
 կուած են . տես անգամ մը թէ որքան  
 զօրութիւն ունի բնութիւնը ու որքան տը-  
 կար է մարդս . խօտի մը բարակ թելը շատ  
 անգամ աս գերեզմաններուն խիստ կարծր  
 մարմարիոնին մէջէն կըթափանցէ կանցնի,  
 որոնց տակը եղող անանկ զօրաւոր մար-  
 դիկը մէյնըն ալ դուրս ելելու չեն : Լըր-  
 բեմն բարձր սիւն մը շիփշիտակ կայնած  
 կըտեսնուի մինակուկ՝ անապատի մը մէջ,  
 ինչպէս որ մէկ մեծ խորհուրդ մը աստե՛ն

աստն կրքարձրանայ կելէ՝ ժամանակէն ու  
թշուառութիւններէն փլուած վշտաղին սըր-  
տի մը մէջ” :

“ Ես ամէն մէկ դիպուած պատահելուն  
ու ցորեկուան ամէն մէկ ժամը զարնելուն՝  
ան յիշատակարաններուն վրայ կըմտածէի :  
Լըրբեմն նոյն արևը որ ան քաղաքներուն  
հիմն (թէմէլ) դրած ժամանակինն ներկայ  
գանուեր էր, շքեղ ու նաղելի քալուած  
քով մը կերթար իմ աշուրներուս առջևը  
անոնց աւերակներուն ետևը կըմանէր . եր-  
բեմն ալ լուսինը ելելով սլարզ օդոյն վրայ,  
երկու հատ կէսէն խորտակուած մօխրի  
ափորներու 1 մէջ տեղը, գեղնած գերեզ-  
մանները ինձի կըցուցընէր . շատ անգամ  
ալ աս աստղին լուսովը՝ որ մարդուս գե-  
ղեցիկ երևակայութիւններուն սնունդ կու-  
տայ, կարծեցի թէ հին յիշողութեանց ո-  
գին տեսայ իմ քովս նստած մտմտութե-  
րու մէջ” :

“ Ա՛յ երջապէս յոգնեցայ աս յիշատա-  
կարաններուն մէջ ժուռ գալէն, ուրտեղ  
շատ անգամ կըլար որ միայն մէկ հատիկ  
փոշի (թօղ) տեղէն կըշարժէի” :

1 Ընն ապէնը՝ Ռ-Երեւելը կայրէնի ու անոնց  
միջիւրը սամսրի Տ-Ը կըպահէին :

“ Ուզեցի տեսնել ու դիտնալ թէ կեն-  
 դանի ազգերը մեռնող ազգերէն աւելի ա-  
 ռաքինութիւն թէ քիչ թշուառութիւն կու-  
 տային ինծի : Օր մը մեծ քաղաքի մը մէջ  
 ժուռ դալով ու պալատի մը ետեւէն անց-  
 նելով՝ որ առանձին տեղ մըն էր, արձան  
 մը տեսայ որ մատովը տեղ մը կըրցուցը-  
 նէր նշանաւոր՝ աստեղս եղած մեծ զոհի  
 մը համար 1 : Այլեւցայ մնացի հոստեղ-  
 ւանքը եղած լուծեանը վրայ, ուր հո-  
 վուն սգալի ձայնը կըլսուէր միայն, որ ան  
 ողբալի արձանէն բոլորաթիբը կըձչէր : Քանի  
 մը բանուորներ արձանին ոտքը նստած է-  
 ին, ու սուլելով քար կըկտրէին : Հար-  
 ցուցի անոնց թէ ինչ կընշանալէր ան ար-  
 ձանը, մէջերնէն մէկ քանին հազիւ թէ  
 դիտցան ինչ ըլլալը, մէկ քանին ալ ինչ-  
 ուան ան մեծ դիպուածը չէին դիտեր, որն  
 որ արձանը մարդուս միտքը կըձղէր : Աս  
 գործքէն ՚ի զատ ուրիշ բան մը չգտնուե-  
 ցաւ, որով կարող ըլլայի ստոյգ դատա-  
 դութիւն մը ընել աշխարհքիս դիպուած-  
 ներուն ու մարդուս որքան պզտիկ ու ոչինչ  
 բան ըլլալուն վրայօք : Եւ ինչ եղան արգեօք

1 Դմարայի Ձջ Ուլի-էլէ Եսիւլ Է Կարալա  
 իայսէն արձանն է :

ան երևելի մարդիկները, որոնք այնքան մեծ  
անուն ունեցան աշխարհքիս մէջ : Ժամա-  
նակը քայլ մը առաւ ու երկրիս երեսը  
նորցաւ” :

“ Իմ ճամբորդութեանցս մէջ ամէն բա-  
նէն աւելի ետէէ եղայ որ փնտրուեմ” ան  
արհեստաւորները ու ան աստուածային  
մարդիկը, որոնք իրենց քնարին վրայ կը-  
հրպեն չաստուածն՝ ըր ու ան ժողովուրդնե-  
րուն երջանկութիւնը, որոնք օրէնքները,  
կրօնքը ու գերեզմանները կը պատուեն” :

“ Եւ երգիչները (հանէնտէ) իրաւ որ  
աստուածային ցեղէ մըն են, ու գրեթէ  
անոնք միայն ունին ճշմարիտ իմաստու-  
թիւնը, ու աստուած հաճեցաւ զանոնք  
իրեւ ընծայ տալ աշխարհքիս : Միան-  
գամայն սուրբ ու գերազոյն կեանք մը  
ունին . կը փառաբանեն անոնք չաստուած-  
ները ոսկեղէն բերնով մը, ու մարդկանց  
մէջ ամէնէն պարզամիտներն են . հրեշտակ-  
ներուն և կամ անմեղ տղոց պէս կրիս-  
տակցին, աշխարհքիս օրէնքները կը նկ-  
նեն, ու կենաց խիստ անմեղ գործքերուն  
չեն կրնար խելք հասցընել . մահուան վը-  
րայ զարմանալի գաղափարներ ունին, ու  
կը մեռնին՝ առանց իմանալու իրենց մեռնի-  
լը նորածին տղոց պէս” :

“Քաղեւոտնիայի լեռներուն վրայ անա-  
 պատներուն վերջին բանաստեղծը, ան քեր-  
 թուածները երգեց ինձի, որոնցմով հին  
 դիւցազուն (գահրաման) մը իրեն ձերութիւն  
 կրմխիթարէր : Չորս քարի վրայ նստած  
 էինք մենք, որոնք մամուռներէն (բօսուն)՝  
 մաշուած էին. ոտուրներնուս քովէն դեռ  
 մը կը վազէր : վայրի այժը անկէ քիչ մը  
 հետո վլուած աշտարակի (գալէ) մը վը-  
 բայէն կանցնէր, ու անապատին հովը՝  
 Քոնայի անապատներուն սուլելով կը փչէր :  
 Իսկ հիմայ քրիստոնէական կրօնքը, խա-  
 ջիր անկեց Մորվէնի դիւցազուններուն ար-  
 ձաններուն վրայ ու Քաւթի քնարն ալ  
 նոյն պեալն եղերը հնչեցուց, ուրտեղ  
 Օսիան իր քնարը ողբալի եղանակով մը  
 կը հնչեցընէր : Ալ իմայի շատուածները որ-  
 քան որ պատերազմասէր էին նէ, քրիստո-  
 նէական հաւատքն ալ այնքան խաղաղու-  
 թեամբ կառաջնորդէ իր հօտերուն, ան-  
 տեղս՝ ուր որ Վինկալ պատերազմներ կու-  
 տար : ու խաղաղութեան հրեշտակներ  
 սփռեց ան ամպերուն վրայ, ուրտեղ ա-  
 ռաջ մարդասպան ողիներ կը բնակէին” :

“Զին ու զուարթատեսիլ Ետալիան  
 խումբ խումբ իմ աչքիս առջևը բերաւ իր  
 գեղեցիկ վարպետ գործքերը : Ա՛հ, ինչ

սաբար ու բանաստեղծական սոսկումով մը  
 ձեռուրներս օրկով ժուռ կուզայի ես ան  
 լանուարձակ շէնքերուն մէջ , որն որ ար-  
 Տեսարը կրօնքին նուիրեր էր . ան սխեմա-  
 փարդ լարիւրինթոսին մէջ ժուռ եկած ժա-  
 մանակս , ինչ աղեղներ ու կամարներ մէկ-  
 մէկու ետե կրտեանէի : Ի՞նչ աղուոր ձայ-  
 ներ են անոնք որ դմբէթներուն մէջ կըլու-  
 սին , ծովուն ալիկոծութեան ձայնին պէս ,  
 անասուններուն մէջ հովուն շառաչելուն  
 պէս , կամ մանաւանդ Ղստուծոյ ձայնին՝ որ  
 իր տաճարին մէջ կը հանէ : Ճարտարապետը  
 կը շինէ բանաստեղծին գաղափարները , ու  
 անոր զգայարանքներուն գպշել կուտայ” :

“ Բայց ես ինչուան անատենը այնքան  
 աշխատութիւններ կրելէն ետքը ի՞նչ սոր-  
 ված էի : Իրաւոր ոչ հիներուն մէջ և ոչ  
 նորերուն մէջ գեղեցիկ բան մը սորվեցայ :  
 Ընցեալը ու ներկան երկու անկատար ար-  
 ձաններ են , առաջինը ժամանակին աւե-  
 բակներուն մէջէն կտոր կտոր եղած գուրս  
 հանուած է , իսկ մէկալը դեռ ասպանիէն  
 իր կառարելութիւնը չէ ստացած” :

“ Բայց գուցէ , ո՞վ իմ ծեր բարեկամ-  
 ներս , մանաւանդ դուն ո՞վ իմաստուն բը-  
 նակիչ գ անապատի , կըզարմանաք որ իմ  
 ձամբորդութիւններուս սլառութեանը մէջ

մէկ անգամ ալ շխտեցայ բնութեանը ըս-  
քանչեւի դորձքերուն վրայ” :

“Օր մը Ատնա լեռան գլուխը ելեր էի ,  
որ կողի մը մէջ տեղը հրաբուլիս լեռ մըն  
է : Տեսայ որ արեւը իմ տակս եղած ըն-  
դարձակ հորիզոնին մէջէն կելէր . Սիկի-  
լիա կողին իմ ոտուրներուս տակը իբրև  
մէկ կէտ մը ձևացած էր , ու ծովն ալ  
հեռուէն կըտեսնուէր իր ընդարձակ տա-  
րածութեամբը : Աս պատկերիս ուղղագիծ  
հայեցուածքին մէջ , հազիւ թէ կրնայի գե-  
տերը զանազանել , որոնք աշխարհագրա-  
կան դիժերուն նման կերևնային թղթի մը  
վրայ նշանակուած . բայց երբոր մէկ կող-  
մէն աչքս բոլոր աս առարկաները կընշմա-  
րէր , մէկալ կողմէն ալ Ատնա լեռանը  
բերնին մէջ կրնայէի , որ ներսի եղած  
նիւթերը սև շոգիի բոցերու մէջ կեռային” :

“Մէկ երիտասարդ մը , որ կիրքերուն  
տակնուվրայ եղած ժամանակը հրաբուլիս  
լեռան մը բերանը նստած՝ դժբաղդ մարդ-  
կանց վրայ վայնասուն կընէ , որոնց սգալի  
խրճիթները լեռան ոտքն են . յիրաւի ով  
առաքինի ծերունիներ , ձեր զթութեանը  
արժանաւոր է անիկայ . բայց ինչ որ մըտ-  
քերնէդ անցունելու ըլլաք նէ Աննագոսին  
համար , աս նկարագրութիւնը ձեր մտքին

առջևը կրբերէ անոր բարուցը ու տրտում  
անձին երևակայութիւնը . աս կերպով բո-  
լոր իմ կենացս մէջ աչքիս ղիմացը ունե-  
ցայ անբաւ ու միանգամայն անզգալի ա-  
բարչութիւն մը , ու իմ՝ քովս անդունդ  
մը՝ բերանը միշտ բաց կեցած” :

Ըս ետքի խօսքերը զուրցելու ժամանա-  
կը յանկարծ լռեց Պենագոս , ու ինկաւ  
դետինը խորունկ մտմտութենքով : Սուէլ  
հայրը մեծ զարմանքի մէջ մնաց , ու կոյր  
Սաշէմը՝ որ երիտասարդին ձայնը ալ չէր  
լսեր , չէր գիտեր թէ ի՞նչ էր լուռ կենա-  
լուն պատճառը :

Պենագոս աչուրները հնդկաստանցիներ  
բու խումբի մը վրայ տնկած էր , որոնք  
խնտալով խօսելով դաշտին մէջէն կանց-  
նէին . ասոնք տեսնելուն պէս՝ սիրտը կել-  
լէ : աչուրներէն քանի մը կաթիլ արցունք  
կըթափին , ու դէպ ՚ի անոնց կըստայ .  
“ Երջանիկ վայրենիներ , ինչո՞ւ համար ին-  
ծի ալ շտրբուեցաւ ատ խաղաղութիւ-  
նը , որ միշտ ձեր հետը կընկերանայ .  
Երբոր ես անօգուտ տեղը այնքան երկիր-  
ներ կըսլալաւէի . դուք կաղնիի ծառի մը  
տակ հանդիստ նստած ձեր գեղեցիկ օրերը  
կանցընէիք առանց համբելու : Դուք միայն  
իմաստութեան հարկաւորութիւն ունէիք ,



բայց սնանկ ալ ինչպէս կը տեսնէի, ձեր  
խաղցած խաղերը խեղով լեցուն էին,  
ու նաև ձեր քնացած ժամանակը խիստ  
աղէկ կը կատարէիք իմաստութեան գործ-  
քերը, անմեղ ազոց պէս: Թէ որ թեթև  
տրամուծիւն մը, որն որ չափէ դուրս եր-  
ջանկութենէ կը ծաղի, ձեր վրայ դալու-  
րլար նէ, իսկոյն մէկդի ձգելով ան ան-  
ցաւոր տրամուծիւնը ու աշուրնիդ դէպ  
ի երկինքը վերցընելով՝ չեմ գիտեր որ  
անձանօթ մէկը կը փնտրուէիք, որ խեղճ  
վայրենիներուն վրայ դժուծիւն կը ցուցը-  
նէ”:

Աս տեղս Ռենադոսին ձայնը քաշուե-  
ցաւ, ու գլուխը կուրծքին վրայ կախեց:  
Շարդաս իր մութ աշուրններովը՝ ձեռքը  
երկնցընելով ու անոր թևը բռնելով՝  
Չաւախ, պօռաց ցած ձայնով մը, սի-  
րուն զաւախ”:

Աս խօսքերուն վրայ՝ Ամելիայի եղբայրը  
ինքը զինքին դալով, ու իր ցրցուցած սրը  
տին խոռովութեանը վրայ ամչնալով, ազա-  
լեց իր հօրը որ ներէ իրեն:

Անասենը ձեր վայրենին դարձաւ ըսաւ.  
“Ինչպէս քուկդ, հաւասար չեն կրնար  
ըլլալ. միայն Չանա՛ որ չափաւորես քու

սրտիդ սաստիկ եռանդը , որ քեզի այն-  
քան ցաւեր տուաւ : թէ որ ուրիշներէն  
աւելի աշխարհքիս տառապանքները կրկը-  
րես նէ , պէտքը չէ որ զարմանաս , վասն  
զի՛ մեծ ոգի ունեցողը պզտիկէն շատ ա-  
ւելի ցաւեր պիտի ունենայ : Շարունակէ  
քու պատմութիւնդ , Գու մեզի Աւրոպային  
մէկ մասը պտրտցուցիր , հիմայ քու հայ-  
րենիքդ ալ պատմէ մեզ որ ան ալ ճանչ-  
նանք : Աղէկ գիտես դուն որ ես Գաղ-  
ղիան դացեր տեսեր եմ , ու ինչ կերպով  
հոն կապուիլ մնալս ալ լաւ գիտես . կու-  
ղէի հիմայ որ ան մեծ մարդուն 1 վրայօք  
խօսիս , որուն հիմայ նշանն ալ աշխարհ-  
քիս մէջ չմնաց , ու որուն հոյակապ խոր-  
ճիթը դացի ժուռ եկայ : Սիրական զաւա-  
կըս , ես հիմայ միայն մտքովս ու յիշո-  
ղութեամբս կապրիմ . մէկ ձեր մը իր յի-  
շողութիւններովը կրնամանի անտառին մէջի  
ձերացած կաղնիի ծառին . աս կաղնին՝  
թէպէտև իր աղուոր տերևներէն զրկուած  
է , բայց երբեմն իր մերկութիւնը օտար  
բոյսերով կրճածկէ , որ իր հին ճիւղերուն  
(տալ ) վրայ բուսած մեծցած են” :

Իննագոս՝ աս խօսքերուն վրայ սիրտք

1. Ի պատմութիւնս ժողովրդի :

հանդիշելով , ասանկ սկսաւ շարունակել իր պատմութիւնը :

“ Այ՛ն ինձի , հայրիկ , ես չկրնալու եմ քեզի հետ խօսակցիլ ան մեծ դարուն վերայօք , որուն միայն վերջը տեսած եմ մանկութեանս մէջ , ու իմ հայրենիքս պայած ժամանակս անցեր էր : Ամենեին մէկ ազգի մը մէջ տեսնուած չէ ասանկ մէկ զարմանալի ու յանկարծադէպ այլափոխութիւն մը : Ան մարդիկները որ գերազանց ոգի մը ունէին , կրօնքին դէմ ակնածութիւն կրցուցընէին , բնութիւննին ծանր էր , ամէնքնին մէկէն փոխուեր նուաստ ոգի մը ստացեր էին , ամբարշտութեան ձեռք զարկեր էին , ու վարքերնին խիստ արուեր ու գէշցեր էր” :

“ Չուր տեղը յուսացեր էի ես գանել իմ հայրենեացս մէջ ան եռանդուն փափաքը , որ ամէն տեղ ընկերացած էր ինձի հետ , և հանդարտել անհիմն անհանգրստութիւնս , իմ ըրած ճամբորդութեանըս մէջ բան մը սորված չէի , թէպէտև տգիտութեան մութը իմ միտքս չէր խաւարած” :

“ Իմ քոյրս գիտես թէ իր անսպասմելի վարմունքովը հաճութիւն կրղզար իմ ներգութիւններս աւելցընելու : Իմ հասնելէս

քանի մը օր առաջ՝ Փարիզէն գացած ըլլալով ան, դրեցի իրեն թէ՛ զինքը տեսնելու համար հոն պիտի գամ. բայց անիկայ շուտ մը պատասխան ըրաւ, Չըլլայ որ տեղէդ բաժնուիս ելես գաս, ինչու որ ես հաստատ տեղ մը չունիմ, կըսէր, այլ ուրտեղ որ գործք մը ունենամ նէ հոն կերթամ: Ի՞նչ ցաւալի մտմտութեան մէջ ինկայ ես ան ատենը բարեկամութեան վրայօք, որ սիրականին ներկայութիւնը կարծարժէ զանի ու հեռաւորութիւնը կը մոռցընէ, դժբաղդութեան և յաջողութեան գէմ չկրնար երկար զիմանալ”:

“Անոր վրայ զիտես թէ հայրենեացս մէջ աւելի մինակուկ մնացի, որ ուրիշ օտար երկիր մը գտնուէի նէ՛ չէի ըլլար: Ազեցի քիչ մը ժամանակ անձանօթ երկիրներու մէջ ինքըզինքս նետել, որ իս չճանչնային: Իմ սիրտս՝ որ զեռ կիրքի մը տէր եղած չէր, իրեն մէկ ընկեք մը կը փնտրուէր, բայց խկոյն իմացայ որ շահածէս աւելի փնաս կրնէի: Ինձմէ՛ ոչ գերագոյն իմաստ մը կը իննդրէին և ոչ խորին զգացողութիւն մը. ու ես ետեւէ էի իմ կեանքս պզտիկցընել չափու մէջ գնել ուրիշ մարդկանց հաւասարելու համար: Իմ փոքս լեցուն ըլլալով առասպելական ու

մտացածին խորհուրդներով , և իմ՝ վիճա-  
կիս վրայ ամհնալով , ու նաև օրէ օր աւել-  
լի ձանձրանալով աշխարհքիս գործքերէն  
ու մարդիկներէն , միտքս զբրի պղախկ գե-  
ղի մը մէջ քաշուիլ , ուրանդ մինակուկ  
ապրեցայ , ու բնաւ մէկը չէր ձանհնար իս” :

“ Այլի բերանը շատ հաճելի եկաւ ին-  
ծի սա առանձին ու ազատ կեանքը , ու  
ամենեին մարդ մը չձանհնալով իս՝ մարդ-  
կանց մէջ կըմանէի կելէի , ու անոնց  
գործքերուն կըխառնուէի” :

“ Շատ անգամ եկեղեցիի մը մէջ նըս-  
տելով , ուրանդ շատ ժողովուրդ չէր գար ,  
երկար ատեն մտմտութով կանցունէի : Աս-  
յիս խեղճ կնիկներ կուգային Աստուծոյ առ-  
ջևը երկրպագութիւն կընէին , ու մեզաւոր  
մարդիկներ կուգային ծունր կըզնէին ապաշ-  
խարութեան ատեանին դիմացը : Ան սուրբ  
տեղուանքէն դուրս ելողներուն երեսը կը-  
խընտար , անոնց բերնէն լսուած կամացուկ  
ձայները , զիտես թէ անոնց կըրիցը ու  
աշխարհքիս ալետանջ վրդովմունքներուն  
ալիքներն էին , որ Աստուծոյ սաքին տա-  
կը կուգային կըղաղբէին : Ա՛յլ մեծդ Աս-  
տուած , դուն որ իմ թափած արցունքնե-  
րս տեսար ան առանձին սուրբ տեղ-  
ւանքը , դուն զիտես թէ քանի՛ անգամ

եւ քու ոտքդ ինկայ աղաչեցի, որ իմ կե-  
նացս ծանրութիւնը ինձմէ վերցընես, կամ  
չէ նէ՝ ծեր մարդու մը փոխես իս: Ա՛հ,  
կայ անանկ մէկ մարդ մը, որ իր նեղու-  
թեանը մէջ ամենեին չուղէ նորէն ծնանե-  
լու, տղայական հասակին մէջ ըլլալու, ու  
իր հողին կենաց ջրովը բարեխառնելու:  
Կայ մի անանկ մէկը, որ իր անձին գէշ  
վարմունքէն երբեմն վշտացած չըլլայ, ու  
մեծ՝ ազնուական և արգար գործք մը ընե-  
լու անբաւական դանուի”:

“Իրիկուան գէմ գէպ՝ ի իմ բնակարա-  
նքս երթալով, կանգ առի կայնեցայ կա-  
մուրջներուն (քէօփրիւ) վրայ, որ արեւուն  
մարը մտնելը տեսնեմ: Աս աստղը քաղ-  
քէն վեր ելած շողիները վառելով բորբո-  
քելով, դիտես թէ ոսկիէ ջրի մը մէջ կա-  
մացուկ մը կը շարժէր, աշխարհքիս դա-  
րուցը մեծ ճօճանակին (փանաուլ) նման:  
Ատքը դիշերուան մութին՝ ձկեցի գացի  
առանձին ու խառնիխուռն ճամբաներուն մէ-  
ջէն անցնելով: Տներուն մէջ փալփացող  
ճրագները տեսնելուս, կարծեցի թէ ցա-  
ւալի ու ուրախալի տեսարաններու մէջ կը  
գրանուիմ, ու կը մտածէի թէ այնքան  
տանիքներուն տակը մէկ բարե-  
կամ մըն ալ չունիմ: Աս մտածմունքնե-

ըր ըրած ժամանակս , մէ յմըն ալ եկեղեցիի մը ժամացոյցը զարկաւ , անկէ ետքը բոլոր եկեղեցւոյ ժամերը նոյն եղանակաւ սկսան զարնել . ամէն մէկ ժամը հնչելուն ընկերութեան մէջ գերեզման մը կը բանայ , ու արցունքներ թափել կուտայ” :

“Աս տեսակ կեանքը՝ որ առջի անգամը զուարճալի երեցեր էր ինծի , ետքը խիստ անտանելի թուեցաւ . ձանձրացայ միւսնոյն տեսարանը միշտ տեսնելով ու միւսնոյն գազափարները մտքիս մէջ միշտ գալով : Սկսայ ան ժամանակը իմ սիրտս քննել , ու ինքրդինքիս կը հարցունէի թէ ի՞նչ բանի կը ցանկամ . բայց չէի գիտեր ես ալ . այլ մէկէնիմէկ միտքս եկաւ ու նայեցայ որ անտաններուն մէջ բնակիլը աղէկ պիտի գայ ինծի . ու իսկոյն միտքս դրի երթալ վայրենի սքսորանաց մէջ իմ կեանքս հատցընել , որ դեռ հազիւ սկսեր էր , և որուն մէջ գարեր անցուցիր էի” :

“Արկու ձեռքով փակեցայ աս իմ առաջադրութեանս , ինչպէս որ բոլոր գործքերուս մէջ կընէի . ու քաշուեցայ դացի փլփլած տան մը մէջ թաղուած մնալու , ինչպէս որ ուրիշ անգամներ ալ մեկներ էի աշխարհքիս վրայ պտոյտք ընելու” :

“Արմեղազրին իս անհաստատ միտք մը  
ժբ” 5

ունենալուս ու մտացածին բաները երկար  
 ատեն չկրնալուս համար վայելիչ, նաև ան-  
 յազ երեակայութեան մը ենթակայ ըլլա-  
 լուս համար, որ կը ջանայ հեշտութեանց  
 յատակը հասնելու, որպէս թէ անոնց  
 կարճատևութիւնը ծանրութիւն մը եղած  
 ըլլար իմ երեակայութեանս, կը մեղադրեն  
 իս նաև իմ նպատակէս անդին անցնելուս  
 համար՝ ուրտեղ որ կրնայի հասնիլ : Ափ-  
 տոս ինծի, միայն մէկ անձանօթ բարիք մը  
 կրփնտրուեմ ես, ու ան ալ իս միշտ կը-  
 հալածէ : Յանցանքը իմս է թէ որ ուր  
 երթամ նէ դիմացս սահմաններ կը հան-  
 դիպին, թէ որ ինծի համար արժէք մը  
 չունին նէ բոլոր անցաւոր իքերը : Ախիս-  
 նամ կոր որ սիրելի են ինծի իմ կենացս  
 միւսնոյն խորհուրդները . ու թէ որ ինն-  
 թենայի երջանկութեան մը հասնելու ալ  
 հաւտալ, ես ան երջանկութիւնը միայն  
 իմ սովորութեանս մէջ պիտի գտնէի” :

“Ազատ առանձնութիւնը ու բնութեան  
 տեսարանը անանկ վիճակի մը մէջ իս մէ-  
 կէն ձգեցին, որ գրեթէ անհնար է ստո-  
 բագրել : Օւրիկ մնացի ազգականներէս,  
 բարեկամներէս, մինակուկ գրեթէ աշխարհ-  
 քիս վրայ . ու սիրած մըն ալ չունենալով՝  
 նեղութիւն կուգար ինծի իմ երկար կեան-



Քրս : Արբեմն յանկարծ կրկարմրէի , ու  
 դիտէի թէ սրտիս մէջէն կրակոտ ծծումբէ  
 (քիւքիւրա) գետեր կրվազէին . ներսէս պօ-  
 ալ մը կուգար ու կըսկսէի կանչուրտել .  
 ոչ քնացած և ոչ արթուն եղած ժամա-  
 նակս հանդստութիւն ունէի : Իմ անձիս  
 թշուառութեան չափը լիցրնելու համար  
 բան մը կըսպակսէր . ձորին (տէրէ) մէջը  
 կիջնէի , լեռան վրան կելլէի , խիստ եռան-  
 դուն փափաքով մը օգնութեան կրկանչէի  
 ես սիրուհիի մը անձը . որն որ գեռ պիտի  
 ստանայի . հովերուն մէջ կըզրկէի ես զա-  
 նիկայ , գիտէի թէ անոր ձայնը կըլսեմ  
 գետին խորոշանքին մէջէն . ինձի համար  
 ամէն բան երևակայական ցնորք (խէյալ)  
 մըն էր , ինչուան երկնքին առաղերը ու  
 աշխարհքիս մէջ կենաց սկզբնաւորութիւնը  
 ինձի սուտ կերևնային” :

“ Սակայն ասանկ խոսվութեան , խաղա-  
 դութեան , աղքատութեան ու հարստու-  
 թեան վիճակին մէջ բոլորովին զուրկ չէի  
 զուարճութիւններէն : Օր մը պզտիկ գե-  
 տի մը եզերքը կայներ էի , ու զուարճա-  
 նալու համար՝ ձեռքս ուռննիի (սէօյիւս)  
 ճիւղ մը բռնած՝ տերևները կըսրկողէի  
 գետին մէջ կընետէի , որոնք ջուրը կառնէր  
 կըտանէր , ու ամէնմէկ տերեւը նետելուս՝

մտքէս մէյմկ խորհուրդ կանցրնէի : (Թա-  
 դաւոր մը որ կը վախնայ թէ յանկարծ ա-  
 պրտատամբութիւն ծագելով՝ ձեռքի իշխա-  
 նութիւնը կը կորսնցրնէ , չկրնար այնքան  
 սաստիկ վիշտեր կրել , ինչպէս որ ես կը  
 կրէի , քանի որ իմ ձեռքիս ճիւղը իյնե-  
 լու կը լար : Ա՛հ , ինչպէս տկար է մար-  
 դըս , ինչպէս անոր սիրար տղայական աշ-  
 խուժութեամբ միշտ լեցուն է , որ բնաւ  
 չձերանար . ահա ինչուան ո՞ր աստիճան  
 մանկութեան կը խոնարհի մեր գերազոյն  
 բանականութիւնը : Խիստ ճշմարիտ է որ  
 շատ մարդիկներ իրենց ճակատագիրը , իմ  
 ձեռքիս ուռնիին տերևներուն նման՝ վա-  
 ղանցիկ (Փանի) բաներու կապած են” :

“ Բայց ինչպէս զուրցեմ ես իմ սրտիս  
 անթիւ ու անցաւոր զգացմունքները , որ  
 ժուռ եկած ժամանակներս կը կրէի : Ընա-  
 պատ դարձած սրտի մը մէջ կիրքերուն պատ-  
 ճառած ձայները , կը նմանին լուռ անասա-  
 տին մէջ հովուն փշելու ու ջուրին վաղե-  
 լու ձայներուն . ամէն մարդ կը լսէ ան ձայ-  
 նը , բայց մէկն ալ չկրնար բերնով պատ-  
 մել” :

“ Ըսանկ անհաստատ մտքով մը ժուռ  
 կուգայի՞ երբոր աշունը վրայ հասաւ , ու  
 մտայ ալեկոծութեանց ամիսներուն մէջ

սիրտս կիրքերով լեցուն : Ատեն կըլար որ  
կըցանկայի ան զինուորներէն մէկը ըլլալ ,  
որոնք խոռովութեանց , տարակուսանքներու  
ու այլանդակ երազներու մէջ ինկած են .  
ատեն ալ կըլար որ՝ ինչուան հովիւին վի-  
ճակին վրայօք կընախանձէի , որ անտառին  
մէկ ծայրը նստած ու քանի մը փայտի  
կտորուանքներով վառած կրակի մը զիմա ,  
չը իր մատուրները կըտաքցընէր : Մտիկ  
կընէի անոր կանչած խաղերը որ արամու-  
թեամբ խառնուած էին , ու կըմտած էի թէ  
բոլոր աշխարհքիս վրայ մարդուս կանչած  
բնական խաղերը անանկ արտմալի են , նաե՛  
թէ որ իր երդերը երջանկութենէն ու սրբ-  
տին ուրախութենէն ալ առաջ եկած ըլ-  
լան : Մեր սիրտը անկատար նուազա-  
րան (չալըը) մըն է , կամ քնար (սանթուռ)  
մըն է առանց լարի , որով ուրախութեան  
ձայներ կըերգենք հառաչանքներով լե-  
ցուն” :

“Յորեկը ձեռուրներս օրելով կըպտը-  
տէի լանուարձակ փշոտ տեղուանքներու  
մէջ , որոնք ինչուան անտառները կըհասնէ-  
ին : Չորցած տերև մը որ հովուն զիմացէն  
կըփախչէր , խրճիթ մը՝ որու մուխը ծառե-  
րուն մերկ զլիւրներնէն կըսարձրանար կել-  
ւէր , բազեզ (սարմաշոք) մը՝ որ հիւսիսային

հովուն փշելովը կերերաբար հին կաղ-  
 նիի ծառի մը բոյնին վրայ . հեռուէն տես-  
 նուած ժայռ մը . ջուրը քաշուած լիճ մը՝  
 որու մէջ չորցած կնիւնը (հասրը օթու)  
 խրչտոց կը հանէ . բոլոր աս ըսածներս  
 իմ զառանցանքներս (սայրդլամայ) կը զըր-  
 ցոեն : Շատ անգամ անապատ ձորի մը  
 մէջ բարձրացած հովիւներուն զանգակա-  
 տունը հեռուանց տեսնելով , աչքս հոն  
 կը տանէի . շատ հեղ ալ իմ դիտուս վրայ  
 թռչող թռչուններուն աչքս տնկած կը-  
 նայէի , ու նոյն վայրկենին՝ անծանօթ գե-  
 տեղերքները ու հեռաւոր երկիրները , ուր  
 որ անոնք կերթային , աչքիս պիմացը բե-  
 րելով՝ կը ցանկայի անոնց թևերուն վրայ  
 նստիլ ու թռչիլ : Բնութեան պրզիւնէ մը  
 կը տանջուէի . կիմանայի որ ես աս աշխարհ-  
 քիս մէջ ուրիշ բան մը չեմ հապա միայն  
 ճամբորդ մը , ու կերենար ինձի թէ՛ եր-  
 կրնքէն ձայն մը կուգար ըսելով . “ Ո՛վ  
 “ մարդ , քու պանդխտութեանդ (գուրպէթ)  
 “ ժամանակը դիռ շհասաւ . սպասէ որ  
 “ մահուան հովը փչէ , ու ան ասենը թևե-  
 “ ըրդ բանաս դէպ ՚ի ան անծանօթ դա-  
 “ լանները թռչելու , ուրտեղ որ քու սիր-  
 “ տըդ կը փափագի ” :

“ Աշխիք ուրեմն շուտով ցանկալի փոթո՞ւ .

“ բիկներ , որ Իրենադասը ուրիշ աշխարհք  
 “ մը տանիք” : Ասանկ ըսելով առաջ կեր-  
 թայի խոշոր խոշոր քայլեր նետելով , ե-  
 րեսս կրակ դարձած էր . հովը անուշիկ մը  
 մագներուս կրփշէր , ոչ անձրև կրզգայի և  
 ոչ սառ (պուզ) , գիտես թէ կախարդեր  
 էին իս , ու սրտիս գիւէն (շէյթան) գիւա-  
 հար եղեր էի” :

“ Գիշերը երբոր հիւսիսային հովը (փոր-  
 եազ) փշելով իմ խուցս կերերցյունէր , եր-  
 բոր տեղատարափ (սաղանախ) անձրևը իմ  
 տանիքիս վրայ կրվազէր , երբոր պատուհա-  
 նին մէջէն լուսինը կրտեսնէի , որ լեռան  
 պէս գիղուած ամպերը կրճղքէր կանցներ  
 հաւի նման՝ որ ծովուն ալիքները կրկտրէ  
 կերթայ , կրթուէր ինծի թէ սրտիս մէջ  
 իմ կեանքս կաւեցրնէր , և թէ աշխարհք-  
 ներ ստեղծելու կարողութիւնս պիտի ունե-  
 նամ . Ա՛հ , նր է թէ իմ ունեցած  
 ուրիշ կիրքերս ալ կարող ըլլայի ձեզի  
 յայտնելու , որ ան ժամանակս կրկրէի :  
 Տէր Աստուած , թէ որ իմ փափաղնե-  
 րուս համեմատ ինծի կին մը տայիր նէ ,  
 թէ որ մեր առջի նախահօրը պէս , իմ  
 մարմնոյս կողէն Ալայ մը ստեղծելով՝  
 ձեռքէն բռնած ինծի բերէիր նէ . . . : Ա՛վ  
 երկնային գեղեցկութեամբ ստեղծուած կին ,

Ես անատենը քու առջևդ ծուներ կըդնէի ,  
 ետքը բազուկներուս մէջ քեզ զրկելով  
 կաղաչէի յաւիտենական Աստուածը , որ  
 իմ մնացած կեանքս քեզի շնորհէ” :

“ Այն ինձի , միսմինակ էի ես երկրիս  
 վրայ . գաղանի թուլութիւն մը կար անգամ  
 ներուս մէջ . ու իմ պզտիկ հասակէս ՚ի  
 վեր՝ կենաց վրայ ունեցած ամպոհութիւնս ,  
 նորէն սկսայ զգալ : Ալ իմ սիրաս արկա-  
 բացաւ , խորհուրդներս պակսեցան , ու վը-  
 րաս միայն ձանձրութիւն մը կըզգայի” :

“ Քիչ մը ժամանակ իմ ցաւերուս դէմ  
 կռուեցայ , բայց իմ միտքս զանոնք յաղ-  
 թեի , չէր : Այլ երջապէս շիրնալով դեղ մը  
 դառնել աս անսովոր վէրքիս , որ բնաւ մէկ  
 տեղս չկար , բայց բոլոր մարմնոյս վրայ  
 տարածուած էր , միտքս գրբի ալ մեռնելու” :

“ Այլ Աստուծոյ պաշտօնեան՝ որ ինձի  
 մտիկ կընես , ներէ՛ , կաղաչեմ մէկ թշուա-  
 րականի մը , որն որ Աստուած գրեթէ  
 մտքէ զուրկ թողուցեր էր : Թէպէտե  
 շերմեռանդ հաւատքով լեցուն էի ես , այլ  
 իմ խօսքերս ամբարշտութեամբ էին , սիրաս  
 կըսիրէր զԱստուծոյ , բայց միտքս կարհա-  
 մարհէր . վարքս , խօսքերս , խորհուրդնե-  
 րըս ու զգայութիւններս մէկմէկու հակա-  
 րակ , մութ ու սուտ էին : Այն , մարդս

զիտէ՛ մի արդեօք միշտ իր սրտին ուզածը ,  
ստոյգ է մի միշտ իր մտածածին վրայ” :

“ Աէկէնիմէկ ձեռքս ինչ որ ունէի նէ՛  
կրկոյտունցընէի , բարեկամներս , աշխարհ-  
քը , անապատը , ամէն բան փորձեր էի  
ու ամէն բան ցաւալի երեցեր էին ինձի :  
Բնկերութենէն վորնատուէէն , Մսելիան  
Թող տալէն ու անապատն ալ ձեռքէս  
երթալէն ետքը , ուրիշ ի՛նչ բան կըմնար  
իմ բովս : Ա՛ երջին տախտակն էր անա-  
պատը , որով յուսացեր էի իմ անձս ազա-  
տելու աշխարհքիս ալէկոծութենէն , ու  
կըզգայի որ ան ալ անդունդին խորը կըն-  
կըզմեր կերթար” :

“ Ինչպէս որ միտքս դրօժեր էի խաղտե-  
րու իս աս կեանքին ծանրութենէն , կըմը-  
տածէի որ որքան խելք ունիմ՝ նէ՛ աս ան-  
միտ դործողութեանս մէջ բանեցընեմ : Ա-  
րովհետեւ իմ վրաս իյնող մը չկար որ շու-  
տով մեղցընեմ իս , ամենեւին մէկ կերպով  
մը չկրցի որտշել ան ցաւալի վայրկեանը ,  
որպէս զի իմ կենացս վերջին ըտպէները  
կուշտ մը վայելեմ , ու իմ բոլոր ուժս մէկ  
տեղ ժողվեմ , հին ժամանակի մէկուն օրի-  
նակին հետեկով , որ հոգւոյս մարմինէս  
բաժնուելը զգամ” :

“ Ասկայն հարկաւոր երեցաւ ինձի հայ-  
ժք՝ 6

րենական ժառանգութեանս հոգ տանելու ու  
 կարգի դրնել , ուստի նամակ մը գրեցի  
 Ամբիային , իմացընելով անոր իմ ընելու  
 գործքս : Անոր իս մտնալուն վրայօք քա-  
 նի մը դանդառներ բերնէս փախան . ու  
 անշուշտ իմացած է ան իմ նամակիս դրը-  
 ւածքէն՝ գորովաշարժ խոովութիւնը , որն  
 որ քիչ քիչ լեցուելով՝ սրաէս դուրս կը-  
 թափէր : Քայց ես կարծեցի թէ իմ գաղա-  
 նիքս անկէց պահած եմ . այլ քոյրս շա-  
 տոնցմէ ստրված ըլլալով իմ սրտիս խիստ  
 ծածուկ գաղտնիքներն ալ ճանչնալու , դի-  
 րաւ իմացաւ միտքս : Աստիածեցաւ ան իմ  
 խիստ զգուշութեամբ մը գրած նամակէս ,  
 ու ան գործքերուն վրայօք ըրած հարցու-  
 փորձներէս , որոնք բնաւ հոգս ըրած չէի  
 առաջները . ետքը պատասխան գրելուն տե-  
 ղը , ինքը ելաւ եկաւ ինձի յանկարծ” :

“Աղէկ մը հասկընալու համար թէ ինչ  
 ցաւեր պիտի դային ետքը իմ վրաս , ե  
 թէ ինչ ուրախութիւն ունեցայ ես առջի  
 անդամը Ամբիան տեսնելուն , պէտք է  
 գիտնալ որ՝ անիկայ աշխարհքիս մէջ իմ  
 մէկհատիկ սիրականս էր . զանիկայ տեսնե-  
 լուն՝ մեր աղայութեանը քաղցր յիշատա-  
 կութիւնները կընէի : Ամբիա իմ քոյրս՝  
 սրտի խոովութեամբ մը քուլս ընդունեցի ,



շատ ժամանակ կար որ չէի դատեր մէկը , որ  
իմ խօսքերս մտիկ ընէր , որուն առջևը  
սիրտս բանալու ալ կարող ըլլայի” :

“ Ամէլիա բազուկներուս մէջ նետուելով  
ու արուն արցունք թափելով ըսաւ ինծի :  
“ Այերախա , դուն մեռնիլ կուզես , երբոր  
“ քու քոյրդ դեռ ողջ է : Դուն կրկասկա  
“ ծես իմ սրտիս վրայ : Չէ , ալ մի խօ-  
“ սիր , թողութիւն խնդրելու մ’ աշխատիր ,  
“ գիտե՛մ ես զամէնն ալ , ամէն բան իմա-  
“ ցայ ես , որպէս թէ հոս քու քովդ եղած  
“ ըլլայի : Ուրեմն դուն իս խաբել կուզես ,  
“ իս’ որ կենացդ առջի զգացողութիւննե-  
“ րուն քու սրտիդ մէջ ծնանիլը տեսայ :  
“ Ահա յայտնի եղաւ քու դժբաղդ բնու-  
“ թիւնդ , աշխարհքիս վրայ ունեցած ձանձ-  
“ րութիւննիրդ ու քու անարդար գործ-  
“ քերդ : Արդում ըրէ հիմայ’ որ սրտիս  
“ մէջ սխալք եմ քեզի , երդում ըրէ մէյ-  
“ մըն ալ ասանկ խենթութիւն չընելու , եր-  
“ դում ըրէ քու կենացդ չմնասելու” :

“ Աս խօսքերը զուրցելով Ամէլիա ա-  
չուրները ինծի անկած բուխ սրտով մը  
կընայէր , ու ճակատս ալ մէկէն համբոյր-  
ներով կըթըջէր . անիկայ սեպէ թէ ինծի  
մայր էր , մանաւանդ մօրէ ալ աւելի  
գթութիւն կըցուցընէր : Ահ Աստուած ,

նորէն իմ սիրտս անհամար ուրախութիւն  
 ներով լեցուեցաւ , ու ես պզտիկ աղու  
 նման մտիթարական խօսքերէն 'ի զատ ու  
 րիշ բան չէի ուզեր , անոր համար շուտով  
 խոնարհեցայ յանձն առնելու Ամելիայի ու  
 զածը , որ էր յաւիտենական երդում մը .  
 ես ալ առանց մտմտալու կատարեցի իր  
 խնդիրքը , ու բնաւ չէի կասկածերու ւ մրտ  
 քէս ալ չէր անցներ թէ ետքը ուրիշ  
 թշուառութիւններու մէջ պիտի իյնիմ" :

"Ամիսէ մը աւելի էր որ մեկտեղ էինք , ու  
 քաղցր ուրախութիւններով մէկմէկու սիրա  
 կը լեցընէինք : Ան օրերը՝ երբոր առատուան  
 դէմ կէլէի քունէս , իս միամինակ դանելուս  
 տեղը , իմ անուշիկ քրոջս ձայնը կըլսէի ,  
 ու իմ հոգւոյս մէջ ուրախութիւն ու եր  
 ջանկութիւն մը կը զգայի : Տնութիւնը  
 չեմ գիտեր ի՞նչ երկնային բան մը շնոր  
 հած էր Ամելիային . իր հոգին ալ մար  
 մնոյն շնորհքը ու գեղեցկութիւնը ունէր .  
 իր զգացողութիւնները խիստ քաղցր էին .  
 ու սրտին մէջ ինչ որ կար նէ , գորովով  
 ու անուշութեամբ լեցուն էին . կրնամ  
 ըսել թէ՛ իր սիրտը խորհուրդները ու  
 ձայնը՝ համաձայն էին մէկմէկու . վախկոտ  
 բնութիւն մը , կնիկ մարդու սէրը ու ան  
 արատութիւնը և հրեշտակաց անուշ ձայնը  
 ունէր" :

“ Բայց ժամանակը հասեր էր որ ես կենացս անտեղի գործքերը քաւէի : Այս իմ ցնորքներուս (իւէյալ) մէջ ինչուանցանկացեր էի դժբաղդութիւն մը կրելու , որ տառապանքներու շնորհ ճշմարիտ պատճառ մը ունենամ . ցանկութիւն սոսկալի , որ Աստուած իր բարկութեամբը լսեց աւկատարեց” :

“ Բայց վայ ինձի , ի՞նչ եմ ես որ իմ պաղտնիքներս ձեզ յայտնել կուզեմ , ո՞վ իմ բարեկամներս : Աշուրներէս թագաւոր արցունքներս կրտեսնէք , ու կրնայի՞ մի ես . . . : Քանի մը որ առաջ ըլլար նէ , աշխարհքիս մէջ մէկը չպիտի կրնար իմ բերնէս ասանկ մէկ զաղանիք մը որսալու . . . : Հիմայ ամէն բան լըմնցաւ : Սակայն ուր էր թէ յաւիտենական լուսութեան մէջ մնար առ իմ թշուառ պատմութիւնս , ո՞վ պատւական ծերունիներ , միտքերնիդ բերէք որ անապատին մէջ ծառին տակը պատմուեցաւ ձեզ , ու ջանացէք մէկու մը չյայտնել դանիկայ” :

“ Չմեռուան վերջերը մտայեք էինք , ու ես կրտեսնէի որ Ամելիա որ օրուան վրայ իր առողջութիւնը ու հանգստութիւնը կրկորսնցընէր , և ընդհակառակը իմ առողջութիւնս կրգորանար ու սկսեր էի հան-

գիտաօրեր անցրնելու : Իր ուժը կը հասնէր , աշուրները կըխորունկնային , քաղելու կարողութիւնը չէր մնացիր ու ձայնը քաշուեր փոխուեր էր : Օր մը յանկարծ քովը գնացի , ու տեսայ որ խաչելութեան մը սաքը ինկած դասն արցունքներ կը լծափէր , Գիշերը , ցորեկը , ընկերութիւնը , առանձնութիւնը , իմ հեռաւորութիւնս ու ներկայութիւնս , ամէնքն ալ անոր սիրտը կը խըռովէին : Եկամայ հառաչանքներ յանկարծ կը հանէր , երբեմն առանց յոգնելու երկար ատեն ժուռ կուզար , երբեմն հազիւ թէ քայլ մը կրնար նետել , աշխատութեան գործքը երբեմն ձեռքը կառնէր բանելու ու երբեմն մէկ կողմ կրնետէր , դիրք մը կը բանար որ կարգայ՝ ու չէր կրնար , տուն մը կը սկսէր ու չէր կրնար լամնցրնել . մէկ մըն ալ մէկէնիմէկ աշուրներէն անձրեւի պէս արցունք կը լաղցրնէր , ու կը քաշուեր մինակուի տեղ մը կերթար աղօթք ընելու :

“Օ՛ր տեղը ջանք կրնէի ես անոր գազանիքը յայտնել տալու , Արբոր կը հարցրնէի նէ զան՝ թե երուս մէջ սխմելով զինքը , սրտասխան կուտար քմծիծաղ ըլլալով ու կըսէր թէ՛ ես ալ քեզի պէս եղած եմ , ու ինչ ունենալս չեմ դիտեր” :

“Ես անկ իրեք ամիս անցաւ , ու իր վի-

ճակը երթալով օրէ որ կըզէշնար : Աերե-  
նար ինծի թէ՛ անոր արցունքը խորհրդա-  
ւոր նամակներ էին , վասն զի իր թափած  
արցունքներուն համեմատ՝ կամ խիստ խը-  
ոսութեամբ և կամ խիստ հանդարտ ըլլալը  
կիմանայի իր սրտին , Վ երջապէս մէկ առ-  
տու մը , մեր սովորական նախաձաշին (դահ-  
վալթը) ատենը անցած ըլլալով , ելայ իր  
խուցը , զարկի դուռը , ու մէկը սլատաս  
խան շտուաւ . բռնութեամբ մը բացի զան  
ու խուցին մէջ մարդ մը չկար” :

“ Վ առարանին (օճաղ) վրայէն նամակ  
մը գտայ որ ինծի գրուած էր . առի զան  
ձեռքս դողողալով , բացի ու կարգացի .  
նէ աս թուղթը սատաճառ սխալի ըլլայ ե-  
ղեր մէյմին ալ ուրախութեան նշան մը  
վրաս չտեսնուելու յետագայ ժամանակիս  
մէջ” :

### Ը. Ուշագոս

“ Վ կայ է ինծի երկինքը , սիրական եղ-  
բայր իմ , որ ես հազար անգամ կեանքս  
կուտայի , քեզի մէկ բոսպէի շափ ալ ցաւ  
չտալու համար . բայց որովհետև դժբաղդ  
մէկն ես գուն , անոր համար չեմ կրնար  
քու երջանկութեանդ համար բան մը բ-  
նել : Աերէ ինծի ուրեմն թէ որ քու

“ քովէ՞ք փախայ առանց քու գիտնալուդ ,  
 “ յանցաւոր մարդու մը պէս . փասն զի  
 “ թէ որ քեզ յայտնէի նէ , պիտի չկրնայի  
 “ քու ազաչանքներուդ գիմանալ . բայց ա-  
 “ նանկ ալ պէտք էր որ ես երթայի . . . .  
 “ Աստուած իմ , ողորմէ ինձի ” :

“ Գիտես դուն , ո՞վ Աննագոս , որ ես  
 “ կուսական կենաց վրայ մեծ փախազ մը  
 “ միշտ ունեցայ . հիմայ ժամանակն է որ  
 “ Աստուծոյ խորհուրդները դորձքի գնեմ :  
 “ Ո՞՞հ . ինչո՞ւ ես այսքան ուշ մնացի . Աս-  
 “ տուած իս կըպատժէ : Քեզի համար  
 “ ես . . . դարուն մնացի : Ա, երէ ինձի . թէ-  
 “ պէտ է քեզի մինակ ձգեցի , բայց գիտ-  
 “ նաս որ ասոր համար սիրտս խիստ կը-  
 “ խըջխշայ ” :

“ Հիմայ սիրտս շատ հանգիստ է , քա-  
 “ նի որ աս սրբազան տեղուանքներուն մէջ  
 “ կըգտնուիմ , որոնց համար դէմ խօսիլդ  
 “ քանի մը անգամ բերնէդ լսած եմ .  
 “ Պան անանկ դժբաղդու թիւններ , որոնք  
 “ յաւիտեան կըբաժնեն մեզի մարդիկնէ-  
 “ րէն . ու ի՞նչ կըլլային ան ատենը այն-  
 “ քան տատապեալ խեղճ աղջիկները . . . .  
 “ Ստոյգ գիտեմ որ դուն ալ , սիրուն եղ-  
 “ բայր , քու խաղաղութիւնդ պիտի դանձս  
 “ աս վանքերուն մէջ : Աշխարհ բիս մէջ

“ քան մը չկայ , որ քեզի արժանաւոր ըլ-  
“ լայ ” :

“ Չեմ ուզեր ըրած երգումդ քու միտ-  
“ քըդ ձգել , վասն զի աղէկ գիտեմ որ  
“ խօսքիդ վրայ հաւատարիմ կրկենաս ,  
“ դուն երգում ըրիր , ու ինծի համար պի-  
“ տի ապրիս աշխարհքիս վրայ : Աէկ մարդ  
“ մը որ միշտ ինքզինքը սպաննելու կըմը-  
“ տածէ , անկէց աւելի դէշ քան կայ մի  
“ արդեօք : Քու բնութիւնդ ունեցող մար-  
“ դու մը խիստ գիւրին է մեռնիլը , հաւա-  
“ տա՛ քու քրոջդ , ու խիստ ալ դժուար  
“ է ապրիլը ” :

“ Բայց որքան կրնաս նէ , եղբայր , շուտ  
“ ելիր ատ մինակութեանը մէջէն , որ աղէկ  
“ չէ քեզի , և ուրիշ մէկ զգաղանք մը  
“ գաիր : Գիտեմ որ կրխնտաս դուն Գաղ-  
“ զիոյ ան սովորութեանը վրայ , որ տղայ  
“ մը չափահաս ըլլայ նէ՝ կարգուելու կըս-  
“ տիպուի . բայց չէ՛ եղբայր , մի խնտար  
“ ու այնքան մի քամահրեր մեր հարերուն  
“ փորձառու ու իմաստուն սովորութիւնը :  
“ Աղէկ է որ , սիրելի Ռենադոս , քիչ մը  
“ հասարակ մարդկանց նմանինք ու այնքան  
“ դժբաղ դութեան տէր չըլլանք ” :

“ Գուցէ կարգուելու ըլլաս նէ , քու  
“ վիշտերուդ օգուտ մը կրնաս գտնել :

“ Աինդ , աղաքդ կրնան քու ցաւերդ մտ-  
 “ ցընել բերկրութիւն աալով քեզի : Այ  
 “ կինը շաշխատիր քեզի երջանիկ ընելու :  
 “ Ետ հոգւոյդ եռանդը , բնաւորութիւնդ ,  
 “ ատ գեղեցկութիւնդ , ազնիւ ու սիրով  
 “ վառուած դէմքդ , ատ գոռոզ՝ անուշիկ  
 “ ու խանդակաթ նայեցուածքդ որ ունիս ,  
 “ գիտնաս որ առոնք մեծ ապահովութիւն  
 “ մըն են քեզի՝ անոր հաւատարմութեանը  
 “ ու սիրոյն վրայ : Ա՛հ , ինչ զուարճութիւն  
 “ է ան , երբոր իր բազուկներուն ու սրբ-  
 “ տին մէջ կըսխամէ ու կըզրդէ քեզի , ա-  
 “ նիկայ իր աչուքները քեզմէ պիտի չգա-  
 “ տէ , անոր բոլոր հոգը քու վրագ պիտի  
 “ ըլլայ , որ չթողու քեզ պզտիկ ցաւ մըն  
 “ ալ կրես : Ենիկայ քու աչքիդ բոլորովին  
 “ սէր ու անմեղութիւն պիտի երենայ . դուն  
 “ մէկ քոյր մը դտած պիտի կարծես ” :

“ Ես . . . վանքը կերթամ , որ ծովուն  
 “ եզերքը շինուած ըլլալով՝ շատ յարմար  
 “ կուզայ իմ սրտիս վիճակին : Ես իմ  
 “ խուցիս ներսի դիէն ալքներուն ձայնը  
 “ պիտի լսեմ , որոնք վանքին պատին զար-  
 “ նելով կըթրջեն զան , ու միտքս պիտի բե-  
 “ բեմ ան ժուռգաւները , որ քեզի հետ ան-  
 “ տառներուն մէջ կընէի , երբոր թեղօշնե-  
 “ բուն գլխուն հանած խըշտոցը լսելով՝



“ կըկարծէինք թէ ծովու աղաղակները նա-  
 “ րէն կը լսենք : Ա՛հ , իմ մանկութեանս  
 “ անուշիկ ընկերը , ուրեմն ես քեզի մէյ-  
 “ մըն ալ պիտի շտեմնեմ : Քեզմէ քիչ  
 “ մը տարիքով մեծ էի ու քեզ օրոցքիդ  
 “ մէջ կօրէի , շատ անգամ մէկտեղ քնա-  
 “ ցեր ենք : Ա՛հ , երանի թէ օր մըն ալ մէկ  
 “ դերեզմանի մէջ երկուքնիս միաւորուէ-  
 “ ինք . բայց չէ , ես մինակ պիտի պառկիմ  
 “ ան եկեղեցիին ցուրտ մարմարի սններուն  
 “ տակը , ուրտեղ յաւիտենական հանդիս-  
 “ տը կը վայելեն ան կոյսերը , որոնք սիրոյ  
 “ ի՛նչ ըլլալը չճանչոցին ” :

“ Չեմ գիտեր թէ կրնալնու ես մի կարգալ  
 “ աս գիրերը , որոնց կէտը թափած ար-  
 “ ցունքներէս աւրուած են , Վերջապէս  
 “ եղբայր իմ , թէ քիչ մը շուտ եղեր է և  
 “ թէ քիչ մը ուշ , պիտի չաժնուէինք մի  
 “ մէկմէկէ : Ի՞նչ պէտք է որ աս կեանքս  
 “ անստոյգ ու քիչ արժէք ունենալուն վը-  
 “ րայօք խօսիմ քեզ : Միտքդ է Պ . . .  
 “ երիտասարդը , որու նաւը Գաղղիոյ  
 “ կըղզիին քովը խորտակուեցաւ : Արբոր  
 “ իր զրած վերջին նամակը առ իր նէ , մեռ-  
 “ նելէն քանի մը ամիս ետքը , իր մար-  
 “ մնոյն հողն ալ չէր մնացիր , և գուցէ  
 “ Աւրուպայու մէջ անոր սուգը պահելու

“ սկսած ժամանակինն Հնդկաստանու մէջ  
 “ արդէն կատարուեր էր : Ի՛նչ է ուրեմն  
 “ մարդս , որուն յիշատակը ասանկ շուտ  
 “ մը կըմոռցուի , որ իր բարեկամներուն մէկ  
 “ մասը անոր մահը լսած ժամանակինն ,  
 “ մէկալ մասը միսթարուած կըլլայ . . . .  
 “ Եւ ի՛նչ , ո՞վ սիրուն ու ամենասիրելի  
 “ Ռենադոս , իմ յիշատակս ալ ասանկ  
 “ շուտ մը պիտի ջնջուի քու մտքէդ . . . .  
 “ Ո՞վ իմ եղբայրս , թէ որ աս անցաւոր  
 “ աշխարհքիս մէջ քեզմէ կըբաժնուիմ՝ նէ ,  
 “ միւս յաւիտենական կենացը մէջ մշտըն .  
 “ ջենաւորապէս քեզի հետ միաւորուելու  
 “ համար է” :

### Ե. Բ. Է .

“ Յ . Գ . Հոստեղս կըզնեմ իմ ունե-  
 “ ցած ապրանքներուս թուլթը , որն որ  
 “ քեզ կըպարզեմ , ու կըլուսամ որ սի-  
 “ բով կընդունիք իմ բարեկամութեանս աս  
 “ փոքրիկ նշանը” :

“ Այսձակ մը ճայթէր ոտուրներուս տա-  
 “ կը , այնքան սոսկում չէր պաաճառիք ին-  
 “ ծի , որքան որ աս նամակը տուաւ : Ի՛նչ  
 “ գաղտնիք ունէր Ամելիա որ ինծմէ պահել  
 “ կուզէր , ո՞վ անոր ստիպեր էր անանկ շուտ  
 “ մը կուսութեան կեանքը ընդունելու : Ա-

նոր ասանկ անուշ ու զմայեցուցիչ սիրով  
 իմ անձնասպանութեան համար ըրած դի-  
 տաւորութենէս փոխելը ու աշխարհքիս հետ  
 հաշտեցընելը, մէկէնիմէկ իս երեսի վրայ  
 թող տալու համար էր մի : Ինչո՞ւ եկաւ  
 ան իմ միտքէս իս դարձընելու : Անիկայ  
 իմ վրաս գութ մը զգալով՝ քովս ելեր  
 եկեր էր, բայց շուտ մը ձանձրանալով  
 աս իր ցաւալի պարտաւորութենէն, իսկոյն  
 կըթողու գժբաղգս՝ որ իրմէ ուրիշ մէկը  
 չունէի երկրիս վրայ, ու կըձգէ կերթայ  
 քովէս, կարծելով թէ՛ իր եղբորը ինքը-  
 ղինքը սպաննելու համար ունեցած մտքէն  
 դարձընելով ու արդիք ըլլալովը, իր ամէն  
 պարտքերը կատարած կըսեպուի : Ահա  
 ասանկ էին իմ անոր դէմ ունեցած գան-  
 դասներս : Ատքը ինքզինքիս դառնալով՝  
 Ապերախտ Ամելիա, կըսէի, թէ որ իմ  
 տեղս ըլլայիր նէ, չէ՛ չէ՛, քու եղբորդ ե-  
 րեսէն չէիր իյներ գուն” :

“Արկին կրկին կարգալով անոր նամա-  
 կը, չեմ գիտեր ի՞նչ տրտում և սիրուն  
 բան մը կըգտնէի մէջը, որ իմ սիրտս  
 կտոր կտոր կընէր : Անիկէնիմէկ միտքս  
 խորհուրդ մը ինկաւ ու անոր վրայ քիչ  
 մը յոյս ունեցայ, անանկ կարծեցի թէ  
 Ամելիային սրտին մէջ սիրոյ կիրք ձնեք

էր մէկուն համար, որուն չէր համարձակեր յայանելու : Աս կասկածը ընելով՝ ըսի թէ, անոր տրամութեը, դրած խորհրդաւոր նամակին ու սիրահարեալ խօսքերուն պատճառը՝ աս պիտի ըլլայ : Ժամանակ չանցուցած իսկոյն թուղթ մը գրեցի անոր, աղաչելով որ իր գաղտնիքները յայանէ ինձի” :

“Ան ալ շուտով պատասխանը գրեց . բայց առանց իր սրտին գաղտնիքը զուրցելու՝ կիմացընէր ինձի միայն թէ, նորընձայութեան ժամանակը լռեցուցեր էր, և թէ անմիջապէս իր ուխտը պիտի հրատարակէր” :

“Սիրտս խիստ ցաւեցաւ Ամելիայի կամակորութեանը (ինատ) վրայ, իր խօսքերուն գաղտնիքին, ու իմ վրաս քիչ վստահութիւն ունենալուն համար” :

“Ի՛նչ բանի ձեռք զարնելուս վրայօք քիչ մը ժամանակ մտածելէն ետքը, միտքս դրի Պ . . . երթալ, և վերջին փորձ մը ընել իմ քրոջս” :

“Անտեղս երթըցուելու ճամբուն վրայ կրգտնուէր իմ հայրենիքս : Արբոր ճամբան տեսայ ան անտառները ուրտեղ իմ կենացըս միմիայն երջանիկ րօպէները անցուցեր էի, չկրցի արցուքներս բռնել, ու անկարելի եղաւ ինձի սրտիս ցաւէն հրա-

ժարական վերջին ողջոյն մը տալու անոնց :  
 Ֆլաստի ճամբէս քիչ մը դուրս ելայ , սս  
 սուրբ պանդխտութիւնը կատարելու , ու  
 հօրս տունը գնացի . բայց իմ մեծ եղբայրս ,  
 որուն հայրենական ժառանգութիւն ինկած  
 էր ան , ծախած ըլլալով , նոր տէրն ալ  
 հոն չէր բնակեր : Հասայ ես մեր գեղի  
 տունը եղևիններով (չամ աղաճը) զարդա-  
 բուած ճամբայէն , անցայ մեծ գաւիթնե-  
 բուն (ավլու) մէջէն , որոնք անասլաս դար-  
 ձեր էին , ու լուծեամբ կանգ առի տեսնե-  
 լու ան զոց ու կէսէն կտարտած պատու-  
 հանները , վայրի դքողը (տիքէնլի օթ) որ  
 պատին տակովը բուսած էր , դոնբրուն շե-  
 մին վրայ եղած տերեւները ու ան երկու  
 հովանոցները՝ ուրտեղ շատ անգամ տեսայ  
 իմ հայրս ու իր հաւատարիմ ծառաները :  
 Մայթերը (գալարբոմ) խոտով ծածկուած  
 էին , ու կենիաստան՝ 1 տեղերնէն ելած քա-  
 բերուն մ, ջ տեղուանքէն կրճէր կրմեծնար .  
 անծանօթ պահապանին մէկը կոպտութիւն  
 եկաւ դոնբրը բացաւ ինծի : Արկբայութեան  
 մէջ էի թէ արդեօք դոնէն ներս մտնեմ  
 մի , թէ ոչ . մէյմըն ալ բարձր ձայնով  
 ըսաւ ինծի պահապանը . “ Դուն ալ ան

օտարական աղջկան իբերը ընել կուզես, որ  
 քանի մը օր կայ հասաւ հոս. երբոր ներս  
 մտնել կուզէր, մէկէն երեսին դոյնը նե-  
 տեց, ձեռքը ոտքը սկսան գողգղալ, անանկ  
 որ շիրնալով դուրս ելլել, իր բազուկնե-  
 րէն բռնեցինք ու տարինք իր կառքին մէջ” :  
 Իսկոյն իմացայ ան օտարական աղջկան ու  
 ըլլալը, որ ինծի պէս տեսնելու եկեր էր  
 ան տեղուանքը, որոնք ողջով ու յիշատա-  
 կութիւններով լեցուն են, բոսպէի մը շափ  
 ժամանակ աշուրներս թաշկինակովս գոցե-  
 լով, մտայ ետքը իմ նախահարերուս բնա-  
 կարանը : Դուռ եկայ սենեակներուն մէջ,  
 ուրտեղ ժամանակ մը ուրախութեան ձայ-  
 ներով լեցուն էին, ու հիմայ իմ ոտուը-  
 ներուս ձայնէն ՚ի զատ ուրիշ ձայն չէր  
 լսուեր, ու միայն աղօտ ճրագով մը լու-  
 սաւորուած էին, որու լոյսը գոց պատու-  
 հաններուն վրայի ծակերէն ներս կրմտնե-  
 ին : Գացի տեսայ նաև ան խուցը, ուրտեղ  
 իմ սիրուն մայրս մեռեր էր իս աշխարհք  
 բերած ժամանակը, նաև ան սենեակները՝  
 ուրտեղ հայրս կըքաշուէր կընստէր, ուր-  
 տեղ ես օրոցքիս մէջ քնացեր էի, ուրտեղ  
 բարեկամութիւնը իմ առջի ուխտերս ըն-  
 գուներ էր քրոջս սրտին մէջ . . . Բոլոր  
 սրահներուն կարասիքները տակնուվրայ ե-

զած էին, ու մամուկը իր կտաւը կը հիւսէր ան երեսի վրայ մնացած խուցերուն մէջ: Արտորալով գուրս ելայ ան տեղուանքէն ու հեռացայ, առանց համարձակելու մէյմըն ալ ետևս դառնալ: Ա՛հ, որքան անուշ են ան տեղուանքը, ինչ ատեն մեր կենացը բոսկէները գետի ջուրի նման արագութեամբ կանցնին, ու քոյրեր և եղբայրներ իրենց մատղաշ հասակնուն մէջ մէկ տեղ կըլլան, իրենց ձեր ծնողացը թևերուն տակը, մարդուս ընտանիքը միայն մէկ օրուան համար է: Աստուծոյ շունչը՝ ծուխի նման կը ջնջէ զանիկայ, երբ հազիւ կըսկսի տղան հայրը ճանչնալ, հայրը իր տղան, եղբայրը՝ իր քոյրը, ու քոյրը իր եղբայրը. կաղնիին ծաւր իր բոլորտիքը կը տեսնէ կաղնիներուն (փալամուծ) ծլիլը. . . . Ասանկ չէ՛ մարդկանց զաւակներն ալ”:

“ Ա . . . . հասածիս պէս, վանքը տանիլ տուի իս, ու ուզեցի որ քրոջս հետ խօսակցիմ: Ատասխան տուին թէ՛ անիկայ իր քովը մարդ մը շնորհունիր, ուստի թուղթ մը գրեցի անոր, ու ինքնալ պատասխան ըրաւ թէ՛ զինքը Աստուծոյ նուիրած ժամանակը, հրաման չկար իրեն որ մէկ խօսք մըն ալ ընէ աշխարհքիս բաներուն վրայօք, ու նաև՝ թէ որ զինքը կըսի.

բեմ նէ , իմ ցաւերովս զինքը չվշտացը-  
նեմ . Արկրկնէր նաև . “ Թէ որ վերջա-  
“ պէս՝ քու միտքդ իմ ուխտ ընելու օրս .  
“ սուրբ սեղանին դիմացը ներկայ գանուիլ  
“ է նէ , կաղաչեմ որ շնորհք ընես իմ հօրս  
“ փոխանորդութիւնը ընելու ինձի . աս է  
“ միայն արժանաւոր քու քաջասրտութեա-  
“ նըդ , մեր բարեկամութեանը ու իմ հան-  
“ գըստութեանս ” :

“ Ընոր ասանկ ցուրտ վարմունքը , որ  
իմ սաստիկ սիրոյս հակառակն էր , խիստ  
մեծ սրտի ցաւերու մէջ ձգեց իս : Աէյմը  
միտք կրնէի ետ գառնալ ու երթալ , մէյ-  
մըն ալ կուզէի հոն մնալ , ուրիշ բանի  
համար չէ , այլ միայն պտորդը ետ ձգելու .  
Աստանաները իս կրգրգռէին ինչուան ե-  
կեղեցիին մէջ դաշնակով (խանչէր) իս  
մեոցունելու , ու իմ վերջին հառաչանքնե-  
րըս ան ուխտերուն հետ խառնելու , որոնք  
յաւիտեան իս իմ քրոջմէս կրգառէին :  
Այնքին մարապետը իմացընել տուաւ ին-  
ձի ըսելով թէ՛ քեզի համար յատուկ  
տեղ պատրաստեր եմ եկեղեցիին մէջ ,  
ու կրհրաւիրէր իս արարողութեան ժամա-  
նակը հոն գանուիլ , որ հետեւեալ օրը պի-  
տի կատարուեր ” :

“ Արշալոյսը ծայր կուտար կոր երբոր



զանդակին ձայնը լսեցի . . . : Դէպ ՚ի  
 ժամը տասին, չեմ գիտեր ինչպէս մահը  
 բերանս հասած՝ դժար քաշելով ելայ վան-  
 քը գնացի . . . . Ասանկ տեսարաններու  
 ներկայ գտնուող մարդու մը, անոնցմէ ա-  
 ւելի ուրիշ ինչ աղետալի բան կերէնայ, ու  
 գեռ անոնց վրայ ապրող թշուառ մարդու  
 վր, առաւել ինչ ցաւալի բան կը դատուի” :

“ Այլեղեցին անհամար բազմութեամբ  
 լեցուն էր . իս ալ տարին ինծի համար  
 պատրաստուած տեղը, ինկայ հոն առանց  
 դիտնալու ուր ըլլալս ու առանց մտածելու  
 ինչ ընելիքս : Քահանան խորանին առջևը  
 մտադրութեամբ աղօթք կընէր, քիչ մը  
 ժամանակէն ետքը խորհրդաւոր վանդակա-  
 սիւնը (փարմաղլըք) մէկէն կը բացուի, ու  
 Ամելիա հազուած կսկուած առաջ կու-  
 գայ : Անանկ գեղեցիկ էր անիկայ, իր ե-  
 րեսին վրայ անանկ մէկ աստուածային բան  
 մը կար, որ ամէնքը կը դարմացընէր : Սուրբ  
 օրիորդին փառաւոր ցաւէն յաղթուելով,  
 կրօնքին գերապանծ մեծութիւններէն սիր-  
 տըս շարժելով, մէկդի թողուցի իմ առջի  
 ըրած միտքերս . հատաւ իմ ուժս, կար-  
 ծեցի թէ ամենակարող ձեռք մը իս կը-  
 դրոկէր, և իմ սրտիս մէջ՝ որ հայհոյութի  
 ու սպառնալիքներով լեցուն էր, միայն

Ջերմեռանդ աղօթքներ, ու ողբեր կային” :

“ Ամելիա մտաւ ամպհոսականի մը տակը, որ իրեն համար սլաւորաստուած էր : Անհամար մոմերուն ու ճրագներուն լուսոյն պիտոզը սկսուեցաւ . չորս կողմը ծաղիկներով լեցուն էր, ու անուշ ծխանելիքները (պուհուր) կը բուրէին . ասոնք աւելի պայծառութիւն մը պիտի տային զոհին : Պատարագին մէջ ընծայութեան աղօթքին ժամանակը քահանան իր զարդերը վրայէն կը հանէ, միայն կտաւէ պատմուճան մը հագած, կը սկսի պարզ ու սրտաշարժ ատենախօսութեամբ մը, զինքը Աստուծոյ նուիրող կուսին երջանկութիւնը նկարագրել : Արբոր ան խօսքերը զուրցեց . Անէկայ խոսիլի Դճոն Երեւոյս, որ կրակին մէջ կայրէ, թուեցաւ ինծի թէ մտիկ ընողներուն վրայ քաղցր խաղաղութիւն մը իջաւ ու երկնային անուշահոտութիւններ բուրեց . թուեցաւ նաև թէ իրրև մէկ ապահով տեղ մը՝ խորհրդաւոր աղանոյն թևերուն տակը լսուեցաւ ան, ու զիտես թէ հրեշտակներ խորանին վրայ կիջնէին ու նորէն երկինք կելէին անուշ հոտերով ու ձեռուրնին պսակներով” :

“ Քահանան իր ճառը լըմացնելէն ետքը նորէն իր զգեստները առաւ ու սկսաւ .

պատարադը շարունակել : Աս միջոցիս մէջ  
 Ամելիայի երկու թեւերէն մէյմէկ նորահա-  
 սակ կոյս աղջիկներ մտած , կուզայ ծունր  
 կիջնէ սեղանին էն վարի աստիճանին վը-  
 րայ . ան ժամանակը եկան իս փընտրուեցին  
 որ հօրը փոխանորդութիւնը ընեմ : Իմ  
 դողգոջուն ոտուըներուս ձայնը լսելով Ա-  
 մելիա՝ քիչ մնաց որ պիտի մարէր իյնէր  
 գեախնը . տարին կայնեցուցին իս սրբազան  
 քահանային քովը , մկրատը (մախաս) անոր  
 ներկայացընելու համար : Աս վայրկենիս  
 մէջ՝ կիրքերուս նորէն ծնանիլը զգացի հող-  
 ւոյս մէջ . քիչ մնաց որ կատղութիս դուրս  
 պիտի թափէի , բայց Ամելիա կրկին սիրտ  
 առնելով , դարձուց ինծի իր աչուըները՝  
 որոնք անանկ կշտամբութեամբ ու կսկիծով  
 լեցուն էին , որ տեսնելուս՝ յանկարծակի  
 եկայ : Արօնքը կըյաղթանակէ . իմ քոյրս  
 խռովութեան մէջ տեսնելով իս , համար-  
 ձակութեամբ մը գլուխը կըկախէ , ու իր  
 գեղեցիկ մազերը շորս կողմէն կիյնին սուրբ  
 մկրատին տակը . երկայն զգեստ մը նրբա-  
 նիւթ ազնիւ կտաւէ կուտան անոր աս աշ-  
 խարհքիս առօրեայ զարդարանքներուն տե-  
 ղը . բայց անոր սիրտը քիչ ոտք չհանե-  
 ցին . ճակատը կըկապեն կտաւ մը , ու  
 ան խորհրդաւոր քողովը՝ որ կուսութեան

ու կրօնից նշանն է , իր մերկ գլուխը կը-  
ծածկին : Ամենեին ան ժամանակուան  
պէս գեղեցիկ երեցած չէր . անոր աչքը աս  
աշխարհքիս հողը կըտեսներ , բայց իր հո-  
գին երկրնքին մէջ ժուռ կուգար” :

“ Ամելիա գեռ ինչուան ան ժամը իր  
ուխտերը հրատարակած չէր , և որովհետե  
ըստ աշխարհի մեռնելու համար , կըհարկա-  
ւորէր որ իբրև մէկ գերեզմանի մը մէջէ-  
անցներ : Աւստի կըփրուի կըպատկի քոյրս  
գետինը պատանքի մը վրայ , ու անոր չորս  
կողմը չորս հատ մօմ կըդնեն : Քահանան  
ուրարը վիզը ու գիրքը ձեռքը՝ ննջեցելոց  
պաշտօնը կըկատարէ , որու ետեէն ալ  
կըսկսին կարգալ ծաղկահասակ կոյսերը :  
Ա՛վ խնդութիւնք կրօնից , ո՞րքան մեծ  
էք դուք , բայց ո՞րքան ալ սոսկալի : Աս  
ծունկի վրայ եկեր էի անոնց ստիպելովը ,  
սգալի հանգէսին մօտ . յանկարծ ականջիս  
շփոթուած ձայն մը կուգայ գերեզմա-  
նական կտաւին տա՛լէն . ականջ կըդնեմ  
ու իսկոյն աս խօսքերը կըլսեմ , “ Տէր  
“ Աստուած ողորմութեան , անէ մի վեր-  
“ ցըներ իս մէյմըն ալ աս սգալի անկող-  
“ նոյն մէջէն , ու քու բարիքներովդ հարըս-  
“ սացուր իմ եղբայրս , որ բնաւ իմ մե-  
“ ղաւոր կիրքերուս մասնակից չեղաւ” :

“ Աս խօսքերը՝ որպէս թէ գաղաղին  
 մէջէն լսուելով , իմ միտքս լուսաւորեցին  
 ու ճանչոցայ ան սոսկալի ճշմարտութիւնը .  
 խեղքս գլխէս կըցնդի , մէկէն կիյնամ մահ-  
 ւան սաւանին վրայ , կըսխմեմ Ամելիան  
 իմ բաղուկներուս մէջ ու կըստամ . “ Ա՛Տ  
 “ ողջախոհ հարսն Քրիստոսի , ընդունէ  
 “ իմ վերջին գրկախառնութիւններս ցուրտ  
 “ դերեզմանին մէջէն ու յաւիտենականու-  
 “ թեանը խորունկէն , որոնք մշտնջենաւո-  
 “ րապէս կըզատեն քեզի քու եղբօրէդ ” :

“ Աս խոսքութիւնը , աս ազաղակը ու  
 աս արցունքները վերուվար կընեն բոլոր  
 արարողութիւնը . քահանան իր երգերը  
 կիսատ կըթողու , կոյսերը վախնալով վան-  
 դակը կըդոցեն , ժողովուրդը կէկզմէկ կանց-  
 նի ու դէպ ՚ի խորանը հըմշարկուելով կեր-  
 թայ . ու իս կըվերցընեն կըտանին անկէ ,  
 գլուխս խեղք չըլլալով ու անշարժ մեռել  
 մը դարձած : Ա՛Տ , չգիտնուք որ շատ շե-  
 նորհակալ եղայ ես անոնցմէ , որոնք իմ  
 խեղքս վրաս բերելով՝ իրր թէ նորէն կեանք  
 տուին ինձի : Աչուլներս բացի ու տեսայ  
 որ զոհը լըմնցեր էր , ու իմ քոյրս սաստիկ  
 կըակներու մէջ կայրէր ջերմը բոնելով , կա-  
 ղաչէր իս ուրիշներուն բերնովը , որ զծնրը  
 մէյսըն ալ շինտըռեմ տեսնելու . . . : Ա՛վ

Թշուառութեան կենացս . քոյր մը իր եղ-  
բօրը հետ խօսելու կը վախնար , ու եղբայրն  
ալ կը վախնար իր ձայնը քրոջը լսեցրնելու :  
Այլ փանքէն դուրս , որպէս թէ քաւարա-  
նի մը մէջէ կելէի , ուրտեղ բոցերը մեզ  
սրբելով երկնային կեանքը փոխուելու կը-  
սկատարաստեն զմեզ , և ուրտեղ յոյսէն 'ի  
զատ' ամէն բան կորսուած է" :

“ Կարելի է որ մարդս իր հոգւոյն մէջ  
զօրութիւն ունենայ իրեն մէկ անձնական  
դժբաղդութեանը դէմ կենալու . համար ,  
բայց անանկ մէկ դժբաղդութիւն մը որ  
անմեղ զոհի մը կուգայ կը հանդիպի , բո-  
լորովին անտանելի է ան : Իմ քրոջս վիշ-  
տերը ճանչնալով , դիւրաւ իմացայ ինչ որ  
ան սպերջանիկը կրեր էր : Ան ատենը շատ  
բաներ յայտնուեցան ինձի , որ ես չէի կըր-  
ցեր հասկընալ , անոր արամութեամբ խառ-  
նուած ուրախութիւնը՝ որ իմ ճամբայ ել-  
լելուս ժամանակը ցուցրցեր էր ինձի , ետ  
դառնալուս իմ երեսս չնայելը , միանգա-  
մայն իր ակարութիւնը՝ որ այսքան երկար  
ատեն արդեօք եղեր էր իրեն՝ վանքը մտնելու :  
Աշխարհքէս քաշուելու համար ըրած միտ-  
քերը , նորընծայութենէ ազատուիլը , իր  
ունեցած սպրանքները ինձի կտակ ընե-  
լը , անշուշտ ան գաղտուկ նամակը իրեն  
գրել տուեր էին , որ իս խաբեց” :

“Ո՛վ բարեկամներ, աղէկ հասկըցայ ես  
անատենը թէ ի՞նչ ըսել է արցունք թափել  
մտացածին մէկու մը համար: Իմ կիրքերս  
որ այնքան ժամանակ դեռ որոշուած չէին  
մէկու մը վրայ, մէկէն աս առաջին ան-  
ձին վրայ թափեցան: Ասե իմ կսկիծնե-  
րըս լեցուելուն՝ սրտիս մէջ հաճութիւն  
մըն ալ ունեցայ, որու չէի յուսար, ու  
մէկ գաղտնի ուրախութեամբ մը միտք առի  
ու իմացայ որ մեր քաշած ցաւերը սէք  
չին եղեր, որ զուարճութեան պէս սրտեր-  
նուս մէջէն հասնին երթան”:

“Ես աս աշխարհքէս մեկնիլ ուզեր էի,  
ամենակարող Աստուծոյ հրաման տալէն  
առաջ. աս ըրածս մեծ յանցանք մըն էր,  
անոր համար Աստուած նոյն ժամանակին  
Ամլիան ինծի խրկեր էր, որ իս ազատէ  
ու պատմէ. ահա ասանկ մարդս իր յան-  
ցաւոր խորհուրդներովք ու շար գործքովք  
դէպ ՚ի իրեն կը քաշէ անկարգութիւններ ու  
տառապանքներ. Ամլիա կազաչէր իս որ  
ապրիմ, ու շատ իրաւունք ունէր անիկայ  
աս բանը ուզելու, որպէս զի իր վիշտերը  
աւելի չձանրացընեմ: Աւրիշ կողմանէ՝ որն  
որ անհաւատալի բան մըն է, ալ մեռնե-  
լու կամք չունէի ես, քանի որ իմ թշուառու-  
թիւնս աւելցեր էր նէ: Զաւր ինծի համար

դքաղանք (էյէնձէ) մը եղած էր, որ բնաւ վրայէս չէր երթար. ահա այսքան իմ սիրտըս բնականապէս ձանձրութեամբ ու թըշւառութեամբ լեցուած է” ։

“ Աւտի մէկէն ուրիշ դիտարարութիւն մը ունեցայ, ու միտքս զրրի թող տալ Աւրոպան ու Մանրիկա անցնիլ” ։

“ Ըն ժամանակներս Պ . . . ին նաւահանգստին մէջ նաւատորմիդ (տօնանմա) մը կը պատրաստուէր Վոլիզիանա երթալու համար. գնացի իսկոյն նաւապետին մէկուն հետ խօսք ըրի, ու Մանրիային ալ միտքս յայտնելով, սկսայ ճամբու պատրաստութիւն տեսնել” ։

“ Իմ քոյրս ինչուան գերիզմանին եզերքը հասեր էր. բայց Մատուած՝ որ կոյսերուն առաջին սրտակը կը պատրաստէր աւտոր, շուզից անանկ շուտ մը իրեն կանչել, որպէս զի աս աշխարհքիս մէջ երկար ժամանակ փորձէ զինքը ։ Աւտի երկրորդ անգամ սկսելով դիցազնուհին աս վշտալի կենացս ընթացքը վարելու, իր խաչին տակը ծոռած՝ քաջասրտութեամբ մը առաջ անցաւ ցաւերուն դէմ կռուելու, ու աս պատերազմին մէջ յաղթութենէ ուրիշ բան չտեսաւ, ու չափազանց տառապանքներուն մէջ՝ միայն չափազանց փառք գտաւ” ։



“ Ինծի մնացած քանի մը կտոր ստա-  
ցուածքները ծախելու համար ժամանակ  
կորսնցրնելս, որ ետքը իմ եզրօրս շնորհե-  
ցի, ու նաւատորմիդին մեծ պատրաստու-  
թիւնը և հովերուն ալ անյաջողութիւնը՝  
երկար ատեն նաւահանգստին մէջ արգի-  
լեցին մեզի: Ամէն ատու կերթայի Ամե-  
լիայէն նոր լուր մը լսելու, ու քանի որ  
ետ դառնայի նէ մէյմէկ նոր պատճառ մը  
կունենայի արցունք թափելու ու անոր ըս-  
քանչելի ընթացքին վրայօք զարմանալու” .

“ Չեռուրներս օրելով կրպտրաէի միշտ  
վանքին բոլորտիքը, որ ծովու եզերքը շին-  
ւած էր: Հատ անգամ անապատ ծովե-  
զերքներուն վրայ բացուած պղտիկ պատու-  
հանի մը մէջ կոյս աղջիկ մը նստած կրտես-  
նէի խորունկ մտմտուք ընելով. ովկիանոսին  
վրայ նայելով կրմտածէր անիկայ, ուրտեզ  
կերենար նաւ մը, որ ալիքները ճգրելով  
աշխարհքիս գէպ ՚ի մէկ ծայրը կերթար:  
Խիստ շատ անգամ նոյն կոյսը տեսայ լուս-  
նի լուսոյն՝ նոյն պատուհանին առջևը, որ  
ծովուն երեսը կրգիտէր, ուրտեզ լուսինը  
զարնելով գեղեցիկ լուսաւորեր էր, ու կե-  
րենար թէ ալիքներուն ձայնին ականջ կը-  
դրնէր, որոնք տրամութեամբ մը կուգային  
ու ամայի ծովեզերքներուն զարնելով կը-  
խորտակուէին” ,

“Գիտեմ թէ դեռ ականջիս կը լսուի զանգակին ձայնը, որ գիշեր ժամանակ հսկումի ու աղօթքի կը կանչէր կոյսերը. երբոր ան կամաց կամաց կը զարնէր՝ կոյսերը դէպ ՚ի Ամենակարողին սեղանը կերթային, ու ես ալ դէպ ՚ի վանքը կը վազէի. անտեղ սրատերուն տակը մինակ ու մուսմութին կը կենայի, երկնային աշտուժութիւնը անոնց աստուածային երգերուն վերջին ձայները մտիկ ընելով, որոնք տաճարին գմբէթներուն տակէն կելլէին ու հեռաւոր ալիքներուն տկար ձայնին հետ կը խառնուէին” :

“Չեմ գիտեր ինչպէս աս ամէն բաները իմ վիշտերս աւելցընելու տեղերնին, անոնց զօրութիւնը կը պակսեցընէին : Իմ արցունքներս այնքան լեղի չէին, երբոր ժայռերուն վրայ ու հովերուն մէջ կը թափէի : “Նաև իմ արամութիւնս՝ որ բնութեամբ չափազանց էր, իր հետը կը բերէր սրտիս մէջ դեղ ու դարման մը. վասն զի ինչ որ մենք կը վայելենք՝ նէ հասարակ բան մը չեն, թէև թշուառութիւն մը ըլլան : Ս'երջապէս յոյս ունեցայ թէ, իմ խեղճ քոյրս ալ, այնքան թշուառ կեանք ալ տի չանցունէ օնկէ ետքը” :

“Ան օրերը նամակ մը առի անորմէն,

որ կերենար թէ աս բրած մարիս հաս-  
 տատութիւն կուտար : Ամիլիա իմ արտ-  
 մութեանս վրայ քաղցրութեամբ մը կըզան-  
 դատէր , ու կըհաւտացընէր ինծի թէ ի-  
 բենքինը օրէ օր քիչնալու վրայ է : “ Աս  
 “ իմ երջանկութեանս վրայ ամենին շեմ  
 “ յուսահատիր , կըսէր ան , հիմայ որ պա-  
 “ տարագը լըմնցաւ , ինծի խաղաղ կեանք  
 “ մը կուտայ : Իմ ընկերակիցներուս պարզ-  
 “ մըտութիւնը , իրենց ուխտերուն անբժու-  
 “ թիւնը , մեր կենացը կանոնաւոր կերպը ,  
 “ բոլորն ալ իմ կեանքս կանուշցընեն :  
 “ Արբոր ալիքներուն ձայնը կըլսեմ , եր-  
 “ բոր ծովու թռչունը կուգայ իր թևերը  
 “ պատուհանին կըզարնէ , ես՝ երկնքի խեղճ  
 “ աղանիս , իմ գեղեցիկ վիճակիս վրայօք  
 “ կըմտածեմ , ալեկոծութեան գէմ՝ ասպա-  
 “ շինելու տեղ մը գտնելուս : Աս է սուրբ  
 “ լեռը , վսեմապանծ գագաթը , ուսկէց կը  
 “ լըտունն աշխարհքիս վերջին աղաղակնե-  
 “ ըը ու երկնքի առջի ձայները : Աս տե-  
 “ ղըս է որ կրօնքը քաղցրութեամբ մը  
 “ կըխաբէ բուխ սիրտ ունեցող անձ մը ,  
 “ աշխարհային խիստ ստատիկ սիրոյն տեղը՝  
 “ ջերմեռանդ արտուած պաշտութիւն մը տա-  
 “ լով անոր , որու մէջ միաւորուած կըզըտ-  
 “ նուին սիրողը ու կոյսը : Կրօնքն է որ սի-

“ Ըստ հարեալ մարդուն պիղծ հառաչանքնե-  
 “ րը կըմաքրէ, մահացու բոցը՝ ապականա,  
 “ ցու բոցի մը կըփոխէ, իւր անմեղութիւնը  
 “ ու սրտին երկնային խաղաղութիւնը հեշ-  
 “ տութեան մնացորդին հետ կըխառնէ, ու  
 “ կըզգայ որ իր կեանքը երթալով մինա-  
 “ կութիւնը կըսիրէ, ու իր սիրտը հան-  
 “ դըստութիւն կըփնտրուէ” :

“ Չեմ դիտեր թէ ի՞նչ ճակատագրի  
 Մատուած իս կը պահէ, և թէ ուզեց անի-  
 կայ իմացունել ինծի թէ աս ալեկոծու-  
 թիւնները ուր որ երթամ նէ ընկեր պիտի  
 ըլլան ինծի : Աւատորմիդին մեկնելու հա-  
 մար հրաման եղած էր. շատ նաւեր արեւը  
 մարը մտնելուն՝ առադաստները բացեր էին,  
 բայց ես հրաման առեր էի ան գիշերն ալ  
 ցամաքը մնալու, որ հրաժարական ողջունի  
 նամակ մը գրեմ՝ Մեկիային : Աէս գիշեր-  
 ւան դէմ՝ երբոր աս տխրալի գործքիս ե-  
 տեն էի, երբոր թուղթը արցունքներովս  
 կըթրջէի. մէկէն իմէկ հովու սաստիկ ձայն  
 մը կը լսեմ : Մկանջ կը դնեմ, ու ալեկո-  
 ծութեանը մէջ թնգանութի ձայներ կը լսու-  
 ՛նին, որ վանքին զանգակի տրտմալի ձայ-  
 նին հետ կըխառնուէին և ուրիշ նաւեր  
 իրեն օգնութեան կըկանչէին : Աէս ի ծո-  
 վեղելքը կը վազեմ՝ ուրտեղ ամէն բան ա-

նապատ գարձեր էր, ուր ալիքներուն ձայնէն 'ի զատ ուրիշ ձայն մը չէր լսուեր : Ժայտի մը վրայ կելլեմ . մէկ կողմէն լեռան պէս դիզուած ալիքներուն փալփալք կրտեսնեմ, միւս կողմէն վանքին մութ պատերը՝ որ ամպերուն մէջ աներևոյթ կըլլային . պղտիկ ճրագ մը կերենար պատուհանի մը երկրձէ վանդակին մէջէն : Դուն էիր, ով սիրուն Ամելիա, որ խաչելութեան ոտքը ծունր դրած՝ փոթորիկներուն Աստուծոյն կաղաչէիր որ քու խեղճ եղբորդ ողորմի . . . : Ալիքներուն վրայի մըրրիկը (գայ), քու բնակարանիդ խաղաղութիւնը, ապաստանարանի մը ոտքը եղած ժայտերուն վրայի խորտակուած մարդիկը, խուցի մը պատին դրսի կողմը երևցած անբաւ ուլկիանոսը, նաւերուն երեւտըկող լապտերնիքը, վանքին անշարժ փարոսը (Ֆէնեռլի գուլէ), նաւով ճամբայ դնացողին ճակատագրոյն անստուգութիւնը, կոյսը՝ որ մէկ օրուան մէջ միայն՝ իր կենացը բոլոր օրերը կըճանչնայ . մէկ կողմէն ալ քու հոգւոյդ նման հոգի մը, ով Ամելիա, ուլկիանոսին պէս ալեկոծութեամբ խռովւած, նաւաստիին կրածէն աւելի սոսկալի նաւակոծութիւն մը . . . : Ասանկ մէկ տեսարան մը գեռ իմ մարքիս ~~էջ~~ թորուն'է

տալաւորուած է . . . : Ա՛յլ արեգակն նոր  
 երկնքիս , վկայ ես դուն այսօր իմ արատունք  
 ներուս , և դուն արձազանգ ամերիկեան  
 ծովեզերքներուն , որ Աննադոսին ողբալի  
 ձայները կրկրկնես : Ես սոսկալի գիշերուս  
 հետեեալ առտուն , որ իմ նաւուս տեսա  
 բանին (խըչին) վերի կողմը կոթըներ նըս  
 տիր էի , տեսայ որ յաւիտեան կը հեռա  
 նայի հայրենիքէս . տնկեցի աշուրներս եր  
 կար ատեն ծովեզերքին վրայ , վերջին ան  
 դամն ալ տեսնելու հայրենեացս ծառերուն  
 երերալը ու վանքին գազաթները՝ որ գէպ  
 'ի հորիզոն կը խանար հէին" :

Աննադոս իր պատմութիւնը լռմացրնե  
 չէն ետքը , թուղթ մը հանեց ծոցէն , ու  
 տուաւ հայր Սուէլին . ետքը Եարգասին  
 բազուկներուն մէջ իյնելով ու հեծկլտանք  
 ները (ընչ զըրըդ) զսպելով , թող տուաւ  
 որ քարոզիչը կարգայ տուած նամակը :

Ես թուղթը . . . վանքին գլխաւորը  
 խրկած էր , որու մէջ կիսապընէր Ա. Բ. Լոյսի  
 սղորհա-Լեւոն արոջ կենացը վերջին պահուն  
 տեղեկութիւնները , որ օգնութիւն ընելով  
 իր ընկերակիցներուն , որոնք տարափոխիկ  
 հիւանդութեամբ մը պառկեք էին , ինքն  
 ալ անոնց վրայ ունեցած բարենախանձու  
 թեանը ու մարդասիրութեանը զոհ կը լայ

կըմենի : Բոլոր մենաստանը անմխիթար  
ցաւով պաշարուած էր , ու Ամելիա սուրբ  
կուտանաց կարգը սեպուած էր : Մարա-  
պետը իր նամակին մէջ կրկրկնէր նաև թէ՛  
երսուն տարիէն ՚ի վեր նոյն վանքին գլխա-  
ւորը ըլլալով , ամենեին տեսած չէր ասանկ  
քաղցրարարոյ ու խոնարհ կոյս մը , որ  
աշխարհային վշտալից հոգերը ձղելուն վը-  
րայօք՝ այնքան գոհ եղած ըլլայ :

Շաքղաս բազուկներուն մէջ սխմելով  
Ռենադոսը՝ կըսէր անոր արտոնքոտ աչուը-  
ներով . “ Չաւակէս , որքան կըցանկայի որ  
“ աստեղս ըլլար Օպրիյ հայրը , Անիկայ  
“ իր սրտին մէջէն չեմ գիտեր ինչ խաղա-  
“ ղութիւն մը կըհանէր , որ խռովութեան  
“ մէջ ինկնող տիրտերը կըհանդարտեցը-  
“ նէր . անիկայ լուսին էր մրկածուփ (գա-  
“ սրըղալը) գիշերուան մէջ . երկնքին երե-  
“ սը ժուռ եկող ամպերը չեն կրնար տանիլ  
“ զանիկայ իրենց սրընթաց քալուածքովը ,  
“ այլ մաքուր ու անայլայլելի անոնց վրայ  
“ հանդարտիկ կըքալէ առաջ կերթայ : Ա՛հ ,  
“ բայց իս ամէն բան կըխոռովէ ու սիրտս կը-  
“ շարժէ” :

Ինչուան ան ժամանակս հայր Սուէլա  
առանց բերանը բանալու խիստ գէմքով  
մը մտիկ ըրած էր Ռենադոսի պատմու-

Թիւնը , բայց իր սրտին մէջ գաղտուկ գուժ  
մը ունէր , թէպէտ և երեսանց անգուժ  
քնութիւն կը ցուցընէր : Բայց տեսնելով  
ետքը թէ Սաշէմի բուխ սիրար կը շարժէր  
անոր պատմութեանը վրայ , շկոցաւ կե-  
կենալ ու ասանկ սկսաւ խօսիլ :

“ Ես քու պատմութեանդ մէջ , ըսաւ  
“ Ռենադոսին , գլխութեան արժանի բան  
“ մը չկայ , ինչպէս որ ուրիշները կը ցուցը-  
“ նեն քեզ : Կս կը տեսնեմ քեզի որ բո-  
“ լորովին մտացածին իքեքու տուած ես  
“ ինքըզինքդ , ու անոր համար ամէն բան  
“ գէշ կերևնայ աչքիդ , ու աշխարհքիս  
“ նեղութիւններէն հեռացեր ես՝ որ անօ-  
“ գուտ ցնորքներու տաս զինքդ : Եշխարհ-  
“ քիս վրայ արհամարհելի աչքով մը նայե-  
“ լով՝ մեծ մը չտեսիիր մարդ պարօն , և  
“ ոչ ատելի կը լան մարդիկ ու կեանքը ,  
“ բայց միայն երբոր ըստ բաւականին ըն-  
“ դարձակ միտք չունի նէ մէկը : Եչքդ  
“ քիչ մըն ալ հեռուն տար , ու խկոյն  
“ կիմանաս թէ բոլոր աս շարիքները՝ որոնց  
“ համար կը ցաւիս , ոչինչ բաներ են : Բայց  
“ ինչ ամօթ է որ ասանց կարմրելու չես  
“ կրնար մտածել քու կենացդ միմիայն ճըշ-  
“ մարիտ թշուառութեանը վրայ : Բոլոր  
“ առաքինութիւնը , բոլոր կրօնքը ու մէկ



սուրբ կոյսի մը բոլոր սրտակները հաղի  
 թէ կընքենք քու սրտիդ ցաւին մրայ միայն  
 մտածելը : Բաւ քայրդ իր յանցանքը  
 քաւեց . բայց թէ որ պէտք է նէ ինչ  
 որ մտքէս կանցնի՝ զուրցել , շատ կըլնախ .  
 նամ որ գորեզմանին ծոցէն սոսկալի ար-  
 դարութիւն մը , ճշմարիտ յայտնութիւն մը  
 ելլելով՝ քու անձդ շտոպէն : Ի՞նչ կը-  
 նես դուս մինակ անտառներուն խորունկը  
 մտած , ուրտեղ քու օրերդ կըմաշեցը-  
 նես , բայց պարտաւորութիւններդ ար-  
 համար հելով : Թէ որ կըսես թէ՛ սուր-  
 բերն ալ անասպաններուն մէջ թաղուե-  
 ցան մնացին , բայց անոնց կեանքը շատ  
 տարբեր էր , ու անոնք իրենց կիրքերը  
 մարելու համար կըգործածէին ժամանա-  
 կը , որն որ դուն քու կիրքերդ վառելու  
 համար կըկորսնչընես : Գո՞տի աղայ ,  
 դուն կարծեցիր թէ մարդս ինքզինքին  
 բաւական կրնայ ըլլալ : Ատանգաւոր է  
 առանձնութիւնը ան մարդուն՝ որ Լու-  
 տուծոյ ընկերութեամբը չապրիր հոն .  
 առանձնութիւնը հոգւոյն զօրութիւնները  
 կաւելցընէ , միանգամայն նոյն զօրութիւն-  
 ները պատշաճաւորապէս գործքի դնելու  
 համար հարկաւոր առարկաները կըվեր-  
 ցընէ : Ա՛յ որ զօրութիւն ընդունեք է

“ նէ , պարտաւոր է իր ընկերներուն ծառայ-  
 “ ութեանը բանեցընել զան . իսկ թէ որ  
 “ անօգուտ թողու մէկը իր կարողութիւնը ,  
 “ նախ գաղտնի թըշուառութեամբ մը կը-  
 “ պատժուի , ետքը՝ կամ շուտ կամ ուշ սոս-  
 “ կալի պատիժ մը կըխըրկէ իրեն Աստ-  
 “ ւած ” ։

Աս խօսքերուս վրայ մեծ շիտթութեան  
 մէջ իյնելով Ռենադոս , վերցուց իր գլու-  
 խը Շաքգասի գրկէն . որ սկսաւ քմծիծաղ  
 ըլլալ , ու անոր աս քմծիծաղը՝ որ բեր-  
 նոմն էր միայն ու աշուրներովը մէկտեղ  
 չէր խնտար , չեմ գիտեր ինչ խորհրդաւոր  
 ու երկնային բան մը կըպարունակէր : “ Օ՛ւ-  
 “ ահըս , ըսաւ անոր Ագալայի հին սիրողը ,  
 “ անիկայ անաչառութեամբ կըխօսի մեզ ,  
 “ երիտասարդին ու ծերին բարբը անխտիր  
 “ կըջանայ շիտկել , ու շատ իրաւունք ունի :  
 “ Այո՛ , պէտք է որ դուն ատ արտաքոյ կարգի  
 “ վարած կեանքէդ հրաժարիս , որ միայն  
 “ թշուառութիւններով լեցուն է . չկայ ու-  
 “ թիշ երջանկութիւն , բայց միայն հասա-  
 “ թակաց ճամբաներուն մէջ ” ։

“ Օր մը Մէսքաչէպէ գետը , որ բնաւ իր  
 “ բխած տեղէն շատ չէր հեռանար , ձանձ-  
 “ րացաւ միշտ պզտիկ գետ մը ըլլալէն : Աւս-  
 “ տի կելլէ լեռներէն ձիւներ , հեղեղնե-

“ րէն (սէլ) ջրեր ու ամպերէն անձրև կը  
“ խնդրէ , կրմնծնայ , իր գետեզերքներէն  
“ դուրս կըթափի , ու բոլոր իր քովերը  
“ եղած զուարճալի դաշտերը այգիները  
“ կաւրէ կաւրըշարկէ : Առջի բերանը կըս-  
“ կըսի պարծիլ գոռոզ առուակը (ըմազ-  
“ ճրգ) իր ուժին վրայօք , բայց տեսնելով  
“ թէ ուսկէց որ կանցի նէ անապատ կը-  
“ դառնայ , ու ան անբաւ առանձնութեանը  
“ մէջէն յորդութեամբ կըվազէ կանցնի , ու  
“ իր ջրերը միշտ պղտոր են , կըցաւի իր  
“ առջի ճամբէն դուրս ելլելուն ու իր յա-  
“ տակը թաց չըլլալուն , որն որ բնութիւնը  
“ փորած էր , իր առջի ընթացքին մաքրու-  
“ թիւնը չունենալուն ու նաև թռչունները ,  
“ ծաղիկները , ծառերը ու ցոռակները՝ որ  
“ ժամանակ մը իր հանգարտիկ քալուած-  
“ քին համեստ ընկերներն էին” :

“ Հաքդաս իր խօսքը լամեցընելէն ետքը ,  
բլան իրեքնին ալ իրենց խրճիթը դառնալու :  
Ռենադոս լուութեամբ մէջ տեղերնէն կը-  
քալէր քարոզչին՝ որ աղօթքներ կըզուրցէր ,  
ու ծեր Սաշէմին՝ որ իր գաւաղանովը ճամ-  
բան կըփնտրուէր : Արսուի թէ Ռենադոս  
իւր երկու ծեր բարեկամներուն ստիպելովը՝  
իւր կնկանը քով գնաց , բայց առանց եր-  
ջանկութիւն գտնելու , ու քիչ ժամանակէ՝

հոգր Եւրդասի ու հայր Սուէլին քով  
 եկաւ մեռաւ, Գաղղիացոց ու Կալէթնե-  
 րուն Լուիզիանայի մէջ տուած անգութ  
 տանջանքներուն ժամանակը: Ժայռ մը կը  
 ցուցընեն հոն, ուրտեղ Ասենադոս արեւը  
 մարը մանելու առենը կերթար կրնատէր:

Վ. Ե. Ր. Զ.







Р. У.

№ 6126

12

13

---

25

15

---

0

5

---

05

12/13/25/15/0/5/05









Р. У.

№ 6126

*Handwritten marks:*  
A stylized signature or set of initials above the number 6126.